280. Քանի երեք գումարեկները գումարը, եթէ առաջին գումարելու $\frac{2}{7}$ մասը հաւասար է $3\frac{2}{3}$ -ին, երկրորդ գումարելու $\frac{3}{4}$ մասը հաւասար է $5\frac{1}{2}$ -ին, իսկ երրորդ գումարելին կազմում է $10\frac{2}{5}$ -ի $\frac{1}{13}$ մասը:

281. Կտակի համաձայն կտակած ամբողջ գումարի $\frac{1}{2}$ -ը ստացաւ ալրին, եղբայրը ստացաւ $\frac{1}{3}$ մասը, իսկ մնացած 100 ռուբլին ստացաւ եկեղեցին: Ո՞րքան էր կտակած գումարը:

281. Մի հասարակութեան մէջ տղամարդիկ կազմում են բոլորի $\frac{2}{5}$ մասը, կանայք՝ $\frac{1}{3}$ մասը, տղայք՝ $\frac{1}{6}$ մասը. բացի զրանցից այնտեղ կան և 12 աղջիկ: Ո՞րքան հոգուց էր բաղկացած այդ հասարակութիւնը:

282. Երեք ներկարար միասին բանելով 1 ժամում պատի ո՞ր մասը կարող են ներկել, եթէ առաջինը ամբողջ պատը կարող է ներկել 10 ժամում, երկրորդը՝ 8 ժամում, իսկ երրորդը՝ 5 ժամում:

282. Աւագանը մէկ խողովակով լցում է 6 ժամում, երկրորդ խողովակով 5 ժամում, իսկ երրորդ խողովակով 3 ժամում: 1 ժամում աւագանի ո՞ր մասը կըլցուի, եթէ երեք խողովակները միաժամանակ բանանք:

283. Երկու քաղաքից միաժամանակ դուրս գալով, երկու ճանապարհորդ գնում էին իրար հանդէպ: Առաջինը ամբողջ ճանապարհը կարող է անցնել 9 օրում, իսկ երկրորդը 6 օրում: 2 օրուալ ընթացքում ամբողջ ճանապարհի ո՞ր մասով միմեանց կրմօտենան:

283. Երեք խողովակներով աւազանի մէջ ջուր է ներս թափուում: Առաջին խողովակով աւազանը լցում է 10 ժամում, երկրորդ խողովակով լցում է 2 անգամ արագ, իսկ երրորդ խողովակով 3 անգամ դանդաղ: Եթէ երեք խողովակն էլ միասին 3 ժամ բանանք, աւազանի ո՞ր մասը կըլցուի:

284. Ի՞նչ կըլինի տարբերութիւնը, եթէ նուազելուն աւելացնենք $5\frac{3}{7}$, իսկ հանելուց հանենք $4\frac{1}{2}$:

284. Ի՞նչ կըլինի տարբերութիւնը, եթէ նուազելուց հանենք $23\frac{1}{8}$, իսկ հանելուն աւելացնենք $5\frac{7}{12}$:

285. Գումարել $4\frac{3}{8}$ -ի $\frac{2}{7}$ մասը $10\frac{2}{21}$ -ի $\frac{3}{4}$ մասի հետ և ստացած գումարը մեծացնել 14 անգամ:

285. $10\frac{3}{8}$ -ի $\frac{4}{5}$ մասը գումարել $\frac{1}{2}$, $\frac{1}{3}$, $\frac{1}{4}$ և $\frac{1}{5}$ կոտորակների հետ և ստացած գումարը փոքրացնել 23 անգամ:

§ 11. Կոտորակների հանումը:

ա) Հաւասար յայտարարներով կոտորակների հանումը:

- | | |
|--------------------------------------|---------------------------------------|
| 286. $\frac{3}{4} - \frac{1}{4}$ | 286. $\frac{5}{9} - \frac{2}{9}$ |
| 287. $\frac{17}{24} - \frac{7}{24}$ | 287. $\frac{51}{67} - \frac{13}{67}$ |
| 288. $1 - \frac{3}{7}$ | 288. $1 - \frac{23}{28}$ |
| 289. $1 - \frac{1}{1000}$ | 289. $1 - \frac{999}{1000}$ |
| 290. $2 - \frac{5}{17}$ | 290. $4 - \frac{13}{23}$ |
| 291. $10 - \frac{25}{41}$ | 291. $27 - \frac{5}{51}$ |
| 292. $4 - 3\frac{1}{10}$ | 292. $8 - 7\frac{2}{3}$ |
| 293. $2 - 1\frac{3}{5}$ | 293. $45 - 44\frac{30}{91}$ |
| 294. $33 - 15\frac{13}{15}$ | 294. $50 - 29\frac{19}{27}$ |
| 295. $3\frac{8}{25} - \frac{3}{25}$ | 295. $5\frac{11}{23} - \frac{4}{23}$ |
| 296. $4\frac{5}{33} - \frac{19}{33}$ | 296. $10\frac{4}{27} - \frac{22}{27}$ |

- | | |
|---|--|
| 297. $9\frac{3}{41} - 8\frac{11}{41}$ | 297. $10\frac{5}{89} - 7\frac{19}{89}$ |
| 298. $28\frac{1}{51} - 17\frac{35}{51}$ | 298. $24\frac{3}{35} - 1\frac{8}{35}$ |

ը) Տարբեր յայտարարներով կոտորակների հանումը:

- | | |
|--|---|
| 299. $\frac{1}{2} - \frac{1}{4}$ | 299. $\frac{1}{3} - \frac{1}{6}$ |
| 300. $\frac{5}{6} - \frac{3}{4}$ | 300. $\frac{7}{9} - \frac{1}{6}$ |
| 301. $\frac{14}{25} - \frac{7}{20}$ | 301. $\frac{9}{14} - \frac{6}{35}$ |
| 302. $\frac{5}{9} - \frac{2}{5}$ | 302. $\frac{11}{16} - \frac{2}{11}$ |
| 303. $\frac{7}{30} - \frac{1}{24}$ | 303. $\frac{5}{22} - \frac{2}{33}$ |
| 304. $1\frac{1}{5} - 1\frac{1}{10}$ | 304. $2\frac{2}{3} - 1\frac{1}{6}$ |
| 305. $3\frac{3}{4} - 1\frac{1}{2}$ | 305. $5\frac{5}{8} - 1\frac{1}{2}$ |
| 306. $31\frac{2}{3} - 15\frac{2}{9}$ | 306. $24\frac{25}{36} - 4\frac{5}{6}$ |
| 307. $3\frac{7}{20} - 2\frac{4}{15}$ | 307. $92\frac{5}{6} - 88\frac{5}{84}$ |
| 308. $6\frac{1}{12} - 5\frac{10}{11}$ | 308. $3\frac{11}{13} - 2\frac{1}{3}$ |
| 309. $51\frac{11}{15} - 27\frac{5}{18}$ | 309. $40\frac{15}{32} - 39\frac{7}{36}$ |
| 310. $2\frac{12}{49} - 1\frac{4}{21}$ | 310. $100\frac{13}{35} - 59\frac{3}{14}$ |
| 311. $17\frac{49}{72} - 16\frac{7}{96}$ | 311. $50\frac{101}{130} - 49\frac{5}{78}$ |
| 312. $7\frac{7}{200} - 6\frac{31}{300}$ | 312. $10\frac{9}{100} - 1\frac{17}{48}$ |
| 313. $8\frac{3}{145} - 7\frac{14}{45}$ | 313. $5\frac{1564}{2625} - 2\frac{133}{4500}$ |
| 314. $20\frac{127}{880} - 11\frac{17}{1116}$ | 314. $16\frac{15}{556} - 15\frac{121}{234}$ |
| 315. $\frac{187}{493} \text{ և } \frac{451}{1189}$ | կոտորակները առաջ կըճատել և ապա հանել: |

315. $\frac{713}{1219}$ և $\frac{217}{371}$ կոտորակները առաջ կըճատել և ապա հանել:

316. Ես կաղպացի գրքի $\frac{7}{53}$ մասը: Ո՞ր մասը մնաց կարդալու: 316. Ջրի մէջ ընկղմած 1 գրվանքայ օսկին կշռում է $91\frac{1}{4}$ մսխալ: Ոսկին ո՞րքան է թեթեւանում:

317. Ջրով լի շիշը կշռում է $4\frac{4}{9}$ գրվանքայ, իսկ դատարկ շիշը կշռում է $1\frac{15}{16}$ գրվ.: Ո՞րքան է կշռում շիշի միջի ջուրը:

317. Ջրով լի շիշը կշռում է $5\frac{11}{18}$ գրվ., իսկ իւրով լի նոյն շիշը կշռում է $5\frac{47}{180}$ գրվ.: Իւրը ջրից ո՞րքանով է թեթեւ:

318. Վաճառականը երկու տեսակ թէյ իրաւանց: Մէկ տեսակից վերցրեց $5\frac{5}{8}$ գրվ., իսկ միւսից $7\frac{1}{18}$ գրվ.: Ստացած

խառնուրդից ծախսեց $10\frac{3}{4}$ զրով: Նրա մօտ սրբան թէյ մնաց:

318. Հայրը իւր երեք որդոցը կտակեց 430 դեսետարին կառուածք: Մեծ եղբայրը ստացաւ $180\frac{2}{3}$ դեսետարին, իսկ միջակը $141\frac{5}{8}$ դեսետարին: Փոքր եղբայրը սրբան ստացաւ:

319. Վաճառականը 140 փութ ապրանք ունէր: Առաջին անգամ ծախսեց $19\frac{5}{12}$ փ., երկրորդ անգամ $41\frac{7}{8}$ փ. և երրորդ անգամ $60\frac{2}{3}$ փ.: Ո՞րքան ապրանք մնաց:

319. Աճառարհորդը առաջին օրն անցաւ ամբողջ ճանապարհի $\frac{7}{12}$ մասը, երկրորդ օրը՝ $\frac{3}{15}$ մասը, իսկ երրորդ օրը՝ $\frac{1}{10}$ մասը: Աճառարհի սր մասը մնաց:

320. Վաճառականը չորս տեսակ թէյից $10\frac{3}{24}$ փութ խառնուրդ կազմեց: Առաջին տեսակից վերցրեց $4\frac{13}{38}$ փութ, երկրորդից $1\frac{3}{8}$ փ., իսկ երրորդից $2\frac{17}{32}$ փութ: Չորրորդ տեսակ թէյից սրբան խառնեց:

320. Խանութում $29\frac{7}{24}$ փութ շաքար կար: Առաջին օրը ծախեցին $4\frac{3}{5}$ փութ, երկրորդ օրը՝ $8\frac{7}{20}$ փութ, երրորդ օրը՝ $7\frac{9}{10}$ փութ, իսկ չորրորդ օրը՝ $2\frac{3}{4}$ փութ: Խանութում սրբան շաքար մնաց:

321. $28\frac{1}{2}$ արշին կտոր մահուդից առաջին անգամ կտրեցին $10\frac{3}{4}$ արշին, երկրորդ անգամ $1\frac{2}{3}$ արշին սրակաս, երրորդ անգամ այնքան կտրեցին, որքան կտրել էին առաջին և երկրորդ անգամները: Ո՞րքան մահուդ մնաց:

321. Գնել են երեք կտոր քաթան: Առաջին կտորը $1\frac{5}{8}$ արշ. կարճ է երկրորդից, երկրորդը $6\frac{7}{36}$ արշ. կարճ է երրորդից, իսկ երրորդը $30\frac{15}{32}$ արշին է: Ընդամենը սրբան արշին քաթան էին գնել:

322. Մի մարդ կնոջը կտակեց իւր կարողութեան $\frac{1}{2}$ -ը, մեծ տղին $\frac{1}{3}$ -ը, փոքր տղին $\frac{1}{8}$ մասը, աղջկանը $\frac{1}{16}$ մասը, իսկ աղջկայ մասից 2 անգամ քիչ եղբօր որդուն. մնացած մասն էլ կտակեց աղքատներին: Աղքատները սր մասը ստացան:

322. Բանւորները 4 օրում վերջացրին մի գործի $10\frac{3}{120}$ մասը: Առաջին օրը շինեցին գործի $\frac{1}{15}$ մասը, երկրորդ օրը $\frac{3}{10}$ մասը, երրորդ օրը այնքան, որքան շինել էին առաջին և երկրորդ օրը: Չորրորդ օրը գործի սր մասը շինեցին:

323. Մի մարդ գնեց մի տուն և մի այգի: Տանը վճարեց իւր ունեցած փողի $\frac{3}{5}$ մասը, իսկ այգուն $\frac{2}{15}$ մասը: Նա սրբան փող ունէր, եթէ տունը այգուց 8190 ռ. աւելի արժէր:

323. Ասօր ես ծախսեցի իմ փողի $\frac{5}{28}$ մասը, իսկ երեկ $\frac{7}{12}$ մասը: Ես ընդամենը սրբան փող ունէի. եթէ երեկ ծախսած փողը 85 կօպէկով աւելի է:

324. Իմ փողի $\frac{5}{11}$ մասը ծախսեցի զրքերի համար, իսկ մնացած փողի $\frac{1}{2}$ -ը դասական ուրիշ պիտուքների համար, որից յետոյ մօտս մնաց 6 ռուբլի: Ես սրբան փող ունէի:

324. Վաճառականը առաջին օրը ծախեց իւր ունեցած թէյի $\frac{2}{5}$ մասը, երկրորդ օրը՝ մնացած թէյի $\frac{1}{8}$ մասը և նրա մօտ մնաց դարձեալ 21 զրով. թէյ: Նա սրբան թէյ ունէր:

325. Մէկ միութիւնից հանել $\frac{1}{2}$, յետոյ մնացորդի $\frac{1}{2}$ -ը, յետոյ նոր մնացորդի $\frac{1}{2}$ -ը, և վերջապէս նոր մնացորդի $\frac{1}{3}$ մասը: Ո՞րքան կրմնայ:

325. Առաջին անգամ ծախել են մի կտոր մահուդի $\frac{1}{5}$ մասը, յետոյ մնացորդի $\frac{1}{2}$ մասը, և ապա նոր մնացորդի $\frac{1}{2}$ -ը: Ո՞ր մասը չի ծախուել:

326. Երկաթուղու երկու գնացք, որոնք հեռու են իրարից մի որոշ տարածութեամբ, առաջ են շարժուում միևնոյն ուղղութեամբ: Առաջին գնացքը իւրաքանչիւր 5 ժամում անցնում է 139 վերստ, իսկ դրան հետևող գնացքը իւրաքանչիւր 6 ժամում անցնում է 185 վերստ տարածութիւն: 1 ժամուայ ընթացքում սրբան տարածութեամբ կրմօտենան իրար:

326. Մի հետևակ մարդ իւրաքանչիւր $\frac{3}{5}$ ժամում անցնում է $2\frac{1}{10}$ վերստ տարածութիւն: Մի որոշ հեռաւորութեամբ և միևնոյն ուղղութեամբ դրան հետևող կառքը իւրաքանչիւր $\frac{5}{8}$ ժամում անցնում է $8\frac{1}{3}$ վերստ: 1 ժամուայ ընթացքում կառքը սրբան տարածութեամբ կրմօտենայ հետևակ մարդուն:

327. Աւազանը ունի 3 խողովակ: Առաջին խողովակով աւազանը լցւում է 5 ժամում, երկրորդ խողովակով՝ 6 ժամում, իսկ երրորդ խողովակով լիքը աւազանը դատարկւում է 4 ժամում: 1 ժամում աւազանի սր մասը կրցուել, եթէ երեք խողովակները միաժամանակ բանանք:

327. 3 բանուոր միասին բանելով մի գործ վերջացրին 4 օրում: Առաջին բանուորը այդ գործը կարող է վերջացնել 12 օրում, իսկ երկրորդ բանուորը՝ 10 օրում: Երրորդ բանուորը միայնակ 1 օրում այդ գործի ո՞ր մասը կըվերջացնի:

328. Նուազելու $\frac{22}{29}$ մասը հաւասար է $2\frac{3}{4}$ -ին, իսկ հանե-
լին հաւասար է $1\frac{3}{10}$ -ի $\frac{3}{4}$ -ին: Գտնել մնացորդը:

328. Նուազելին հաւասար է $10\frac{1}{2}$ -ի $\frac{5}{6}$ -ին, իսկ մնացորդի $\frac{5}{9}$ մասը հաւասար է $4\frac{1}{36}$: Գտնել հանելին:

329. Անյայտ թուի և նրա $\frac{1}{5}$ մասի տարբերութիւնը հա-
ւասար է $\frac{2}{3}$ -ին: Գտնել անյայտ թիւը:

329. Անյայտ թուի $\frac{1}{13}$ մասը փոքր է նրա $\frac{5}{26}$ մասից $4\frac{1}{2}$ -ով: Գտնել անյայտ թիւը:

330. Եթէ անյայտ թուի $\frac{3}{4}$ մասին աւելացնենք 25, կը-
ստացուի անյայտ թուի $\frac{23}{24}$ մասը: Գտնել անյայտ թիւը:

330. Եթէ անյայտ թուի $\frac{2}{3}$ մասից հանենք $\frac{1}{8}$, կըստացուի անյայտ թուի $\frac{1}{2}$ -ը: Գտնել անյայտ թիւը:

Հետևեալ օրինակների մէջ ցոյց տուած գործողութիւնները կատարել.

- 331. $(1 - \frac{19}{120}) + (3 - \frac{7}{40}) + (2 - \frac{2}{3})$
- 331. $(5 - \frac{2}{3}) + (7 - \frac{4}{11}) + (8 - \frac{31}{66})$
- 332. $(8 - \frac{7}{4}) + (10 - \frac{2}{2}) + (16 - \frac{14}{5})$
- 332. $(15\frac{1}{30} - 12\frac{7}{10}) + (2\frac{1}{4} + 1\frac{1}{3}) + (\frac{3}{50} - \frac{2}{75})$
- 333. $25 - (7\frac{2}{5} - 2\frac{1}{3} + 15\frac{1}{2})$
- 333. $19\frac{3}{4} - (3\frac{9}{16} + 5\frac{2}{3} - 2\frac{11}{12})$
- 334. $(9\frac{7}{10} + 4\frac{5}{8} + 3\frac{4}{5}) - (8\frac{2}{3} + 4\frac{5}{6} + 2\frac{7}{18})$
- 334. $(4\frac{7}{18} + 7\frac{1}{9} - 10\frac{17}{20}) - (5\frac{7}{10} + 6\frac{5}{6} - 12\frac{8}{15})$
- 335. $\frac{1}{9} - [(\frac{1}{3} - \frac{1}{5}) - (\frac{1}{72} + \frac{1}{48})]$
- 335. $1\frac{1}{9} - [(\frac{2}{3} - \frac{1}{4}) + (\frac{7}{12} - \frac{7}{45})]$
- 336. $[13 - (10\frac{11}{96} + 2\frac{7}{32})] + [5 - (8\frac{1}{10} - 3\frac{4}{15})]$
- 336. $[3\frac{2}{3} - (2\frac{1}{2} - 1\frac{5}{8})] - [3\frac{1}{2} - (1\frac{7}{7} + \frac{5}{14})]$
- 337. $3\frac{1}{30} - [(2\frac{7}{18} + 1\frac{2}{15} + \frac{4}{45}) - (5\frac{1}{2} - 2\frac{1}{3})] + (2\frac{1}{5} - \frac{1}{2})$
- 337. $(1\frac{1}{4} - \frac{3}{10}) + [17\frac{13}{360} + (9\frac{7}{180} - 3\frac{17}{90} + 1\frac{19}{60}) - (1\frac{1}{9} - \frac{23}{24})]$

§ 12. Կոտորակների բազմապատկումը:

ա) Կոտորակը բազմապատկել ամբողջ թուի վրայ:

338. Բանուորը մի օրում ստանում է $\frac{3}{4}$ լուբլի: Ո՞րքան կստանայ 2, 3, 4, 5 և 6 օրում:

338. Թէլի գրպը կշռում է $\frac{5}{6}$ լոտ: Ո՞րքան կըկշռի 2, 3, 4, 6 և 8 գրպը:

339. Մէկ արկղ խնձորն արժէ $2\frac{3}{4}$ լուբլի: Ո՞րքան արժէ 4, 8, 12 և 16 արկղ խնձորը:

339. Հողենաւը մի ժամում անցնում է $17\frac{8}{25}$ վերստ տա-
րածութիւն: Ո՞րքան կանցնի 2, 5, 10 և 25 ժամում:

340. $\frac{2}{3} \cdot 5$ 340. $\frac{5}{8} \cdot 7$ 341. $\frac{7}{9} \cdot 10$ 341. $\frac{12}{17} \cdot 11$

342. $\frac{5}{6} \cdot 6$ 342. $\frac{17}{27} \cdot 3$ 343. $\frac{20}{63} \cdot 45$ 343. $\frac{15}{51} \cdot 17$

344. $\frac{113}{360} \cdot 81$ 344. $\frac{241}{700} \cdot 90$

345. $3\frac{3}{4} \cdot 5$ 345. $5\frac{3}{5} \cdot 6$

346. $7\frac{17}{20} \cdot 10$ 346. $9\frac{14}{25} \cdot 75$

347. $9\frac{20}{27} \cdot 9$ 347. $11\frac{25}{48} \cdot 6$

348. $10\frac{3}{7} \cdot 21$ 348. $40\frac{11}{42} \cdot 7$

349. $17\frac{3}{4} \cdot 18$ 349. $51\frac{3}{5} \cdot 12$

350. $111\frac{1}{9} \cdot 132$ 350. $120\frac{5}{14} \cdot 175$

351. $2\frac{1}{2} \cdot 4 \cdot 15$ 351. $3\frac{5}{6} \cdot 3 \cdot 11$

բ) Ամբողջ թիւը բազմապատկել կոտորակի վրայ:

352. Մէկ գրվանքայ շաքարը արժէ 15 կոպէկ: Ո՞րքան արժէ $\frac{1}{5}$ գրվ., $\frac{2}{5}$ գրվ., $\frac{3}{5}$ գրվ., $\frac{4}{5}$ գրվ.:

352. Մէկ արշին մահուդն արժէ 4 լուբլի: Ո՞րքան արժէ $\frac{1}{2}$ արշ., $\frac{1}{4}$ արշ., $\frac{3}{4}$ արշ., $\frac{5}{8}$ արշ.:

353. Մէկ գրվանքայ իւղը արժէ 28 կոպէկ: Ո՞րքան արժէ $\frac{3}{7}$ գրվ., $\frac{5}{14}$ գրվ., $\frac{3}{28}$ որվ., $1\frac{1}{2}$ գրվ., $2\frac{3}{4}$ գրվ.:

353. Ճանապարհորդը 1 ժամում անցնում է 4 վերստ տա-
րածութիւն: Ո՞րքան ճանապարհ կանցնի $\frac{5}{6}$ ժ., $\frac{7}{8}$ ժ., $\frac{10}{11}$ ժամում, $1\frac{3}{4}$ ժ., $2\frac{2}{3}$ ժ.:

354. $3 \cdot \frac{1}{2}$ 354. $5 \cdot \frac{3}{4}$ 355. $4 \cdot \frac{3}{5}$ 355. $7 \cdot \frac{5}{8}$
 356. $6 \cdot \frac{2}{3}$ 356. $12 \cdot \frac{5}{6}$ 357. $18 \cdot \frac{10}{21}$ 357. $21 \cdot \frac{41}{42}$
 358. $51 \cdot \frac{15}{34}$ 358. $44 \cdot \frac{13}{66}$ 359. $217 \cdot \frac{6}{7}$ 359. $102 \cdot \frac{5}{6}$
 360. $121 \cdot \frac{3}{22}$ 360. $225 \cdot \frac{11}{100}$
 361. $3 \cdot 2\frac{1}{2}$ 361. $4 \cdot 6\frac{2}{3}$
 362. $7 \cdot 2\frac{4}{9}$ 362. $31 \cdot 5\frac{1}{4}$
 363. $10 \cdot 8\frac{1}{2}$ 363. $7 \cdot 3\frac{4}{21}$
 364. $13 \cdot 1\frac{7}{65}$ 364. $48 \cdot 1\frac{5}{96}$
 365. $180 \cdot 4\frac{2}{9}$ 365. $132 \cdot 4\frac{1}{11}$
 366. $200 \cdot 4\frac{101}{150}$ 366. $124 \cdot 41\frac{11}{24}$
 367. Գտնել՝ ա) 18-ի $\frac{2}{9}$ մասը, ը) 31-ի $\frac{4}{5}$ մասը, գ) 128-ի $\frac{6}{23}$ մասը, զ) 1280-ի $\frac{11}{16}$ մասը:
 367. Գտնել՝ ա) 60-ի $\frac{5}{12}$ մասը, ը) 200-ի $\frac{7}{24}$ մասը, գ) 625-ի $\frac{9}{25}$ մասը, զ) 1331-ի $\frac{8}{363}$ մասը:

գ) Կոտորակը բազմապատկել կոտորակի վրայ:

368. 1 արշին չիթն արժէ $\frac{7}{10}$ ռուբլի: Ո՞րքան արժէ $\frac{1}{3}$ արշ., $\frac{3}{4}$ արշ., $\frac{4}{5}$ արշ., $\frac{5}{6}$ արշ.:
 368. 1 ժամում լապտերի մէջ վառուում է $\frac{5}{8}$ գրվանքայնաւթ: Ո՞րքան նաւթ կայրուի $\frac{1}{4}$ ժամում, $\frac{2}{3}$ ժ., $\frac{7}{15}$ ժ., $\frac{4}{35}$ ժ.:
 369. 1 ժամում լցում է աւազանի $\frac{3}{25}$ մասը: Աւազանի ո՞ր մասը կըրցուի $\frac{2}{5}$ ժամում, $\frac{4}{9}$ ժ., $1\frac{2}{3}$ ժ., $2\frac{1}{2}$ ժ.:
 369 Ճանապարհորդը 1 օրում անցաւ $10\frac{1}{2}$ վերստ տարածութիւն: Նա ո՞րքան ճանապարհ կանցնի $\frac{1}{2}$ օրում, $\frac{2}{3}$ օր., $1\frac{1}{3}$ օր., $3\frac{1}{7}$ օր.:
 370. $\frac{1}{2} \cdot \frac{1}{2}$ 370. $\frac{1}{3} \cdot \frac{1}{3}$ 371. $\frac{3}{4} \cdot \frac{1}{5}$ 371. $\frac{1}{8} \cdot \frac{5}{9}$
 372. $\frac{5}{7} \cdot \frac{2}{3}$ 372. $\frac{7}{13} \cdot \frac{5}{6}$ 373. $\frac{11}{17} \cdot \frac{5}{14}$ 373. $\frac{8}{11} \cdot \frac{9}{19}$
 374. $\frac{11}{13} \cdot \frac{6}{11}$ 374. $\frac{21}{31} \cdot \frac{10}{21}$
 375. $\frac{13}{28} \cdot \frac{7}{15}$ 375. $\frac{11}{39} \cdot \frac{13}{19}$
 376. $\frac{19}{35} \cdot \frac{35}{57}$ 376. $\frac{105}{112} \cdot \frac{16}{21}$
 377. $\frac{225}{363} \cdot \frac{121}{125}$ 377. $\frac{343}{500} \cdot \frac{200}{441}$
 378. $\frac{15}{34} \cdot \frac{6^3}{5}$ 378. $4\frac{5}{7} \cdot \frac{28}{33}$
 379. $13\frac{7}{8} \cdot \frac{21}{37}$ 379. $\frac{32}{35} \cdot 15\frac{5}{12}$

380. $\frac{102}{325} \cdot \frac{4^{41}}{136}$ 380. $19\frac{5}{21} \cdot \frac{294}{303}$
 381. $1\frac{1}{3} \cdot 2\frac{1}{2}$ 381. $4\frac{1}{5} \cdot 3\frac{1}{4}$
 382. $1\frac{5}{6} \cdot 3\frac{5}{9}$ 382. $2\frac{5}{8} \cdot 3\frac{5}{7}$
 383. $5\frac{1}{4} \cdot 2\frac{5}{7}$ 383. $7\frac{7}{9} \cdot 3\frac{5}{18}$
 384. $5\frac{5}{8} \cdot 1\frac{17}{27}$ 384. $6\frac{5}{12} \cdot 2\frac{10}{33}$
 385. $9\frac{9}{16} \cdot 3\frac{17}{45}$ 385. $5\frac{19}{27} \cdot 6\frac{6}{35}$
 386. $\frac{1}{2} \cdot \frac{2}{3} \cdot \frac{3}{4}$ 386. $\frac{2}{3} \cdot \frac{6}{7} \cdot \frac{7}{8}$
 387. $5\frac{1}{4} \cdot 1\frac{1}{7} \cdot 5\frac{1}{2}$ 387. $2\frac{1}{2} \cdot 3\frac{2}{3} \cdot 2\frac{1}{11}$
 388. $\frac{2}{5} \cdot \frac{3}{8} \cdot \frac{4}{9} \cdot \frac{6}{7} \cdot 35$ 388. $20 \cdot \frac{11}{12} \cdot \frac{5}{8} \cdot \frac{6}{25} \cdot \frac{4}{11}$
 389. $1\frac{1}{2} \cdot 2\frac{1}{3} \cdot 3\frac{1}{4} \cdot 4\frac{1}{5}$ 389. $3\frac{1}{3} \cdot 4\frac{1}{5} \cdot 3\frac{3}{7} \cdot 3\frac{1}{8}$
 390. $\frac{5}{6} \cdot \frac{3}{11} \cdot \frac{5}{9} \cdot \frac{22}{25} \cdot \frac{3}{10}$ 390. $\frac{11}{12} \cdot \frac{6}{7} \cdot \frac{3}{8} \cdot \frac{21}{22} \cdot \frac{2}{3}$
 391. $3\frac{2}{3} \cdot 5\frac{1}{4} \cdot 6\frac{3}{7} \cdot 4\frac{7}{8} \cdot \frac{4}{13} \cdot 2\frac{2}{15} \cdot \frac{14}{35} \cdot \frac{5}{33}$
 391. $5\frac{2}{5} \cdot \frac{5}{7} \cdot 7\frac{5}{9} \cdot 3\frac{1}{15} \cdot \frac{21}{25} \cdot \frac{15}{17} \cdot \frac{14}{23} \cdot \frac{1}{36} \cdot 1\frac{1}{14}$
 392. Գտնել՝ ա) $\frac{3}{4}$ -ի $\frac{1}{2}$ մասը, ը) $\frac{5}{8}$ -ի $\frac{2}{3}$ մասը, գ) $2\frac{1}{4}$ -ի $\frac{4}{5}$ մասը, զ) $20\frac{5}{6}$ -ի $\frac{7}{15}$ մասը:
 392. Գտնել՝ ա) $\frac{3}{25}$ -ի $\frac{7}{18}$ մասը, ը) $6\frac{5}{7}$ -ի $\frac{7}{47}$ մասը, գ) $9\frac{4}{9}$ -ի $\frac{3}{5}$ մասը, զ) $60\frac{4}{9}$ -ի $\frac{18}{85}$ մասը:
 393. Անագէ գդալը կշռում է $3\frac{8}{9}$ մսխալ: Ո՞րքան կըկշռուին մեծութեամբ ոսկէ գդալը, եթէ ոսկին անագից $2\frac{3}{7}$ անգամ ծանր է:
 393. Արծաթը ջրից $10\frac{1}{2}$ անգամ ծանր է, իսկ ոսկին արծաթից ծանր է $1\frac{5}{6}$ անգամ: Ոսկին ջրից ո՞րքան անգամ ծանր է:
 394. Մի մարդ ունէր $30\frac{3}{4}$ ռուբլի: Նա գնեց $4\frac{1}{4}$ գրվ. թէյ, գրվանքան $2\frac{2}{5}$ ռ. և նորից $6\frac{2}{5}$ գրվ. ուրիշ տեսակ թէյ, գրվանքան $2\frac{7}{10}$ ռ.: Նրա մօտ ո՞րքան փող մնաց:
 394. Աղախինն ունէր 5 ռ.: Նա գնեց $3\frac{3}{4}$ գրվ. սուրճ, գրվանքան 40 կ., $10\frac{1}{5}$ գրվ. շաքար, գրվանքան 15 կ. և $3\frac{2}{3}$ արշ. չիթ, արշինը 27 կ.: Նրա մօտ էլի ո՞րքան փող մնաց:
 395. 1 մսխալ արծաթն արժէ 28 կ.: Ո՞րքան կարժենայ 2 գիւժին թէյի և $1\frac{1}{2}$ գիւժին սեղանի գդալը, եթէ թէյի իւրաքանչիւր գդալը կշռում է $2\frac{3}{4}$ մսխալ, իսկ սեղանի գդալը $7\frac{5}{8}$ մսխալ:
 395. Ո՞րքան արժէ 3 ոսկեայ շղթան, եթէ առաջինի մէջ

պարունակում է $15\frac{3}{4}$ մսխալ ոսկի, երկրորդի մէջ՝ $19\frac{5}{8}$ մսխ. և իսկ երրորդի մէջ երկրորդից $7\frac{23}{24}$ մսխ. աւելի ոսկի կայ և եթէ 1 մսխալ ոսկին արժէ $3\frac{3}{5}$ ռ.:

396. Գնել են երկու գլուխ շաքար: Առաջինը կշռում է $\frac{4}{15}$ փութ, իսկ երկրորդի քաշը կազմում է առաջինի քաշի $\frac{3}{4}$ մասը: Ո՞րքան է կշռում երկրորդ գլուխը:

396. Մեծ որդու տարիքը կազմում է հօր տարիքի $\frac{3}{8}$ մասը, իսկ փոքր որդու տարիքը կազմում է մեծի $\frac{2}{3}$ մասը: Փոքր որդու տարիքը հօր տարիքի ո՞ր մասն է կազմում:

397. Ջրի մէջ ընկղմած մի կտոր արձիճը կորցնում է իւր քաշի $\frac{3}{10}$ մասը: Արձիճը ջրի մէջ ո՞րքան կըկշռւի, եթէ օդի մէջ նա կշռում է $3\frac{1}{7}$ գրվ.:

397. Մի կտոր երկաթը ջրի մէջ կորցնում է իւր քաշի $\frac{1}{8}$ մասը: Ո՞րքան կըկշռւի ջրի մէջ երկաթի կտորը, եթէ օդի մէջ նա կշռում է $15\frac{9}{14}$ գրվ.:

398. Գնել են $20\frac{1}{2}$ օգմա թուղթ: Առաջ գործածեցին զրա $\frac{2}{5}$ մասը, չետոյ մնացածի $\frac{1}{3}$ մասը: Ո՞րքան թուղթ մնաց:

398. Աշակերտը իւր փողի $\frac{5}{8}$ մասով գէրք առաւ, իսկ մնացած գումարի $\frac{1}{9}$ մասով՝ թուղթ: Նրա մօտ փողի ո՞ր մասը մնաց:

399. 3 բանուոր միասին ստացան $45\frac{1}{2}$ ռուբլի: Առաջինը ստացաւ այդ գումարի $\frac{3}{7}$ մասը, երկրորդը ստացաւ մնացած գումարի $\frac{5}{13}$ մասը, իսկ երրորդը ստացաւ մնացած գումարը: Ամեն մէկը ո՞րքան ստացաւ:

399. Վաճառականը առաջին անգամ ծախեց իւր ապրանքի $\frac{3}{4}$ մասը, երկրորդ անգամ մնացածի $\frac{3}{4}$ մասը, իսկ երրորդ անգամ վերջին մնացորդի $\frac{3}{4}$ մասը: Ապրանքի ո՞ր մասը մնաց:

400. Երեք քսակի մէջ փող կայ: Առաջինի մէջ կայ $40\frac{3}{4}$ ռուբլի, երկրորդի մէջ առաջինից $2\frac{1}{2}$ անգամ աւելի, իսկ երրորդի մէջ երկրորդից $3\frac{2}{5}$ անգամ աւելի: Երեք քսակի մէջ միասին ո՞րքան փող կայ:

400. Բանուորը առաջին օրը աշխատեց $1\frac{1}{2}$ ռուբլի, երկրորդ օրը՝ 3 անգամ շատ, երրորդ օրը աշխատեց երկրորդ օրը աշխատած փողի $\frac{3}{5}$ մասը, իսկ չորրորդ օրը աշխատեց երրորդ

օրը աշխատած փողից $1\frac{2}{3}$ անգամ շատ: Նա ընդամենը ո՞րքան փող աշխատեց:

401. Ա և Բ կայարաններից, որոնց միջև հեռաւորութիւնը 410 վերստ է, առաւօտեան 7 ժ. 15 ռ. գուրս եկան երկու գնացքներ և գնում են միմեանց հանդէպ: Մէկը 1 ժամում անցնում է $35\frac{1}{4}$ վերստ, իսկ միւսը՝ $31\frac{2}{5}$ վերստ: Կէս օրից չետոյ 1 ժ. 15 ռ. գնացքների հեռաւորութիւնը միմեանցից ո՞րքան կըլինի:

401. Երկու մարդ միաժամանակ դուրս գալով երկու զիւղերից, գնում են իրար հանդէպ: Գիւղերի հեռաւորութիւնը միմեանցից $30\frac{1}{2}$ վերստ է: Առաջինը 1 ժամում անցնում է $5\frac{2}{5}$ վերստ, իսկ երկրորդը առաջինի մի ժամում անցածի $\frac{8}{9}$ մասը: $2\frac{1}{3}$ ժամից չետոյ նրանք ո՞րքան հեռու կըլինեն միմեանցից:

402. Վաճառականը գործարանում 558 արշին երեք տեսակ մահուդ գնեց: Առաջին տեսակի արշինների թիւը կազմում էր բոլորի $\frac{3}{18}$ մասը, իսկ երկրորդ տեսակի արշինների թիւը՝ $\frac{11}{31}$ մասը: Առաջին տեսակի ամեն մէկ արշինին նա վճարեց $3\frac{1}{9}$ ռուբլի, երկրորդ տեսակի ամեն մէկ արշինին վճարեց այդ գումարի $\frac{3}{4}$ մասը, իսկ երրորդ տեսակի ամեն մէկ արշինին վճարեց երկրորդ տեսակի մէկ արշին մահուդի գնի $\frac{13}{16}$ մասը: Բոլոր մահուդը ծախելուց չետոյ, մէկ ռուբլուն 20 կոպէկ օգուտ ստացաւ: Նա ո՞րքան աշխատեց բոլորի մէջ:

402. Գերձակը գնեց 77 արշին սև, կապույտ և կանաչ մահուդ: Սև մահուդի արշինների թիւը կազմում էր բոլորի $\frac{4}{21}$ մասը, իսկ կապույտ մահուդի արշինների թիւը հաւասար էր սև մահուդի արշինների թուի $\frac{10}{11}$ մասին: Սև մահուդի արշինն արժէր $4\frac{3}{4}$ ռ, կապույտ մահուդի արշինի գինը հաւասար էր սև մահուդի արշինի գնի $\frac{3}{5}$ մասին, իսկ կանաչ մահուդի արշինի գինը կապույտ մահուդի արշինի գնից $1\frac{1}{3}$ անգամ աւելի էր: Բոլոր մահուդը ծախելուց չետոյ, 1 ռուբլուն 15 կ. վնասուեց: Նա բոլորի մէջ ո՞րքան վնասուեց:

403. Երեք եղբայր մի դետին գնեցին և միմեանց մէջ բաժանեցին: Առաջինը ստացաւ $51\frac{1}{4}$ գեսետին, երկրորդը ստացաւ առաջինի ստացածի $\frac{3}{5}$ մասը, իսկ երրորդը ստացաւ

առաջինի և երկրորդի ստացածի $\frac{5}{8}$ մասը: Ամբողջ գետինը քանի գետնատին էր և բոլորին զրքան փող վճարեցին, եթէ գետնատինն արժէ այնքան բուրլի, որքան կ'ստացուի եթէ $2\frac{5}{9} + \frac{1}{4} - \frac{2}{3}$ բազմապատկենք $69\frac{3}{385}$ -ի վրայ:

403. Խանութում երեք արկղ սուրճ կար: Առաջինի մէջ կար $3\frac{1}{2}$ փութ, երկրորդում կար $1\frac{1}{3}$ անգամ շատ առաջինից, իսկ երրորդում կար առաջին և երկրորդ արկղների սուրճի $\frac{5}{14}$ մասը: Ո՞րքան էր բոլոր սուրճը և զրքան արժէր, եթէ 1 փ. արժէ այնքան բուրլի, որքան կ'ստացուի, եթէ գտնենք $(15\frac{2}{5} + 11\frac{1}{2} - \frac{1}{7})$ -ի $\frac{1680}{1887}$ մասը:

404. Ի՞նչ կըլինի արտադրեալը, եթէ բազմապատկելին բազմապատկենք $4\frac{1}{2}$ -ի վրայ, իսկ բազմապատկիչը $\frac{8}{9}$ -ի վրայ:

404. Ի՞նչ կըլինի արտադրեալը, եթէ բազմապատկելին փոքրացնենք $6\frac{3}{4}$ անգամ, իսկ բազմապատկիչը $1\frac{1}{3}$ անգամ:

405. Ի՞նչ կըլինի քանորդը, եթէ բաժանելին մեծացնենք $4\frac{1}{5}$ անգամ, իսկ բաժանարարը փոքրացնենք $2\frac{3}{7}$ անգամ:

405. Ի՞նչ կըլինի քանորդը, եթէ բաժանելին փոքրացնենք $4\frac{2}{3}$ անգամ, իսկ բաժանարարը մեծացնենք $1\frac{1}{14}$ անգամ:

406. Գտնել $\frac{4}{5}$ -ի կէսի կէսը:

406. Գտնել $1\frac{5}{9}$ -ի կէսի $\frac{3}{7}$ մասը:

Հետևեալ օրինակները մէջ ցոյց տուած դործողութիւնները կատարել.

- 407. $(2\frac{2}{3} + 2\frac{2}{5}) \cdot 3\frac{3}{4}$
- 408. $(\frac{1}{2} + \frac{2}{7} + \frac{4}{5}) \cdot 21$
- 409. $(\frac{8}{9} + 1\frac{3}{6}) \cdot (\frac{3}{5} - \frac{3}{7})$
- 410. $(6\frac{3}{32} - 5\frac{3}{4}) \cdot (2\frac{7}{30} + 7\frac{1}{10} + 6\frac{2}{3})$
- 410. $(4\frac{1}{31} + 3\frac{2}{17}) \cdot (1\frac{1}{4} - 2\frac{1}{7} + 1\frac{1}{13})$
- 411. $[(5\frac{1}{4} \cdot 6\frac{2}{3}) - (6\frac{5}{6} - 4\frac{3}{4})] \cdot \frac{3}{79}$
- 411. $[(6\frac{5}{8} - 3\frac{5}{6}) - (\frac{4}{9} \cdot 1\frac{1}{4})] \cdot 7\frac{1}{5}$
- 412. $[(16\frac{3}{5} + 8\frac{2}{3}) - (3\frac{5}{12} + 4\frac{1}{2})] \cdot (3\frac{6}{7} - 3\frac{286}{399})$
- 412. $[(7\frac{7}{12} - 3\frac{2}{9}) - (5\frac{4}{15} - 2\frac{3}{10})] \cdot (15\frac{5}{12} - 4\frac{1}{6})$

§ 13. Կատրակների բաժանումը:

ա) Կոտորակը բաժանել ամբողջ թուի վրայ:

413. Ճանապարհորդը 4 ժամում անցնում է $\frac{4}{5}$ վերստ տարածութիւն: 1 ժամում զրքան կանցնի:

413. 6 բանուոր աւարտեցին մի գործի $\frac{2}{3}$ մասը: 1 բանուորը այդ գործի զր մասը կաւարտի:

414. $8\frac{2}{3}$ լոտ ոսկուց պատրաստեցին 6 հատ միատեսակ մատանի: Ամեն մէկ մատանին զրքան կըլիշուի:

414. 20 բանուորին օրական բաւականանում է $1\frac{7}{8}$ փութ հաց: Ո՞րքան հաց կըբտականանայ մէկ բանուորի:

- 415. $\frac{3}{4} : 3$
- 415. $\frac{7}{9} : 7$
- 416. $\frac{15}{16} : 15$
- 416. $\frac{20}{31} : 20$
- 417. $\frac{36}{37} : 12$
- 417. $\frac{45}{49} : 15$
- 418. $\frac{5}{6} : 4$
- 418. $\frac{9}{11} : 8$
- 419. $\frac{15}{22} : 11$
- 419. $\frac{17}{30} : 13$
- 420. $1\frac{1}{2} : 3$
- 420. $5\frac{5}{6} : 7$
- 421. $5\frac{11}{12} : 11$
- 421. $6\frac{5}{12} : 15$
- 422. $4\frac{7}{8} : 26$
- 422. $9\frac{5}{8} : 33$
- 423. $75\frac{25}{57} : 75$
- 423. $87\frac{56}{63} : 84$

բ) Ամբողջ թիւը բաժանել կատրակի վրայ:

424. Ո՞րքան արժէ 1 գրվանքայ շաքարը, եթէ ա) $\frac{1}{2}$ գրվ. արժէ 8 կոպէկ, ը) $\frac{1}{3}$ գրվ. արժէ 5 կ., գ) $\frac{1}{8}$ գրվ. արժէ 2 կ.:

424. Ո՞րքան արժէ 1 փութ իւղը, եթէ ա) $\frac{1}{4}$ փութն արժէ 2 բուրլի, ը) $\frac{1}{5}$ փ. արժէ 3 բ., գ) $\frac{1}{10}$ փ. արժէ 1 բ.:

425. Ի՞րքան արժէ 1 արշին մահուզը, եթէ ա) $\frac{2}{5}$ արշինն արժէ 2 բուրլի, ը) $\frac{3}{4}$ արշ. արժէ 3 բ., գ) $1\frac{1}{2}$ արշ. արժէ 6 բ., զ) $2\frac{2}{3}$ արշ. արժէ 16 բ.:

425. Մեքենայի անիւր 1 ժամում զրքան պտոյտ կանի, եթէ ա) $\frac{5}{12}$ ժամում նա անում է 30 պտոյտ, ը) $\frac{6}{17}$ ժ. անում է 24 պտոյտ, գ) $2\frac{3}{8}$ ժ. անում է 190 պտոյտ, զ) $4\frac{1}{4}$ ժ. անում է 510 պտոյտ:



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

426. $1 : \frac{1}{2}$ 426. $5 : \frac{1}{5}$ 427. $4 : \frac{5}{6}$ 427. $9 : \frac{5}{7}$
 428. $18 : \frac{16}{23}$ 428. $24 : \frac{24}{25}$ 429. $27 : \frac{9}{13}$ 429. $49 : \frac{7}{8}$
 430. $32 : \frac{24}{25}$ 430. $48 : \frac{20}{27}$
 431. $24 : 1\frac{1}{5}$ 431. $32 : 2\frac{2}{3}$
 432. $42 : 2\frac{1}{7}$ 432. $56 : 1\frac{7}{9}$
 433. $375 : 9\frac{5}{8}$ 433. $945 : 5\frac{12}{13}$
 434. $1899 : 7\frac{5}{7}$ 434. $1875 : 2\frac{11}{37}$
 435. Քանել x -ը, եթէ $u) \frac{1}{5}x=3, \mu) \frac{2}{3}x=8, q) \frac{11}{17}x=121, \eta) 1\frac{1}{2}x=27, \theta) 2\frac{5}{6}x=51$;
 435. Քանել x -ը, եթէ $u) \frac{3}{4}x=17, \mu) \frac{3}{23}x=75, q) \frac{35}{51}x=56, \eta) 8\frac{3}{11}x=130, \theta) 10\frac{5}{8}x=170$;

զ) Կոտորակը բաժանել կոտորակի վրայ:

436. Ո՞րքան արժէ 1 գրվանքայ սպրանքը, եթէ $u) \frac{1}{2}$ գրվ. արժէ $\frac{5}{8}$ ռ., $\mu) \frac{2}{3}$ գրվ. արժէ $\frac{1}{4}$ ռ., $q) \frac{4}{5}$ գրվ. արժէ $\frac{6}{25}$ ռ., $\eta) \frac{5}{9}$ գրվ. արժէ $\frac{5}{36}$ ռ.:

436. Ո՞րքան ժամանակում կանցնեն 1 վերստ տարածութիւնը, եթէ $u) \frac{1}{3}$ ժամում անցնում են $\frac{3}{4}$ վերստ, $\mu) \frac{3}{4}$ ժամում՝ $\frac{6}{15}$ վերստ, $q) \frac{6}{7}$ ժամում՝ $\frac{8}{9}$ վերստ, $\eta) \frac{5}{6}$ ժամում՝ $\frac{35}{36}$ վերստ:

437. Ո՞րքան արժէ 1 գրվ. թէյը, եթէ $u) \frac{3}{4}$ գրվ. արժէ $1\frac{1}{2}$ ռ., $\mu) \frac{4}{5}$ գրվ. արժէ $2\frac{1}{5}$ ռ., $q) 4\frac{1}{3}$ գրվ. արժէ $10\frac{5}{6}$ ռ., $\eta) 1\frac{1}{2}$ գրվ. արժէ $1\frac{10}{20}$ ռ.:

437. Հողեկառքը 1 ժամում ո՞րքան տարածութիւն կանցնի, եթէ $u) \frac{3}{5}$ ժամում անցնում է $22\frac{1}{2}$ վերստ, $\mu) \frac{2}{3}$ ժ. անցնում է $20\frac{1}{3}$ վերստ, $q) 1\frac{1}{3}$ ժ. անցնում է $33\frac{1}{3}$ վ., $\eta) 2\frac{1}{4}$ ժամում անցնում է $67\frac{1}{2}$ վերստ:

438. $\frac{1}{4} : \frac{1}{3}$ 438. $\frac{1}{5} : \frac{1}{8}$ 439. $\frac{2}{3} : \frac{3}{7}$ 439. $\frac{5}{9} : \frac{6}{11}$
 440. $\frac{12}{13} : \frac{36}{37}$ 440. $\frac{8}{11} : \frac{27}{44}$
 441. $\frac{27}{35} : \frac{45}{49}$ 441. $\frac{42}{65} : \frac{49}{91}$
 442. $3\frac{1}{2} : \frac{2}{3}$ 442. $\frac{7}{9} : 8\frac{3}{5}$
 443. $27\frac{15}{46} : \frac{17}{28}$ 443. $\frac{11}{25} : 9\frac{5}{8}$
 444. $3\frac{5}{7} : 4\frac{3}{35}$ 444. $8\frac{7}{10} : 15\frac{5}{12}$

445. $22\frac{25}{36} : 15\frac{7}{54}$ 445. $30\frac{65}{72} : 82\frac{34}{63}$
 446. $54\frac{34}{35} : 13\frac{27}{75}$ 446. $87\frac{57}{74} : 40\frac{35}{96}$
 447. $100\frac{2}{3} : 21\frac{4}{7}$ 447. $127\frac{17}{53} : 100\frac{25}{81}$
 448. Քանել x -ը, եթէ $u) \frac{1}{2}x=\frac{1}{2}, \mu) \frac{3}{7}x=\frac{11}{13}, q) \frac{5}{9}x=3\frac{1}{3}, \eta) 1\frac{1}{4}x=2\frac{1}{2}, \theta) 7\frac{3}{5}x=1\frac{9}{10}$;
 448. Քանել x -ը, եթէ $u) \frac{7}{8}x=\frac{1}{64}, \mu) \frac{9}{11}x=\frac{18}{55}, q) \frac{5}{7}x=7\frac{1}{7}, \eta) 10\frac{1}{11}x=4\frac{2}{3}, \theta) 8\frac{3}{10}x=33\frac{1}{5}$;
 449. Երկու քաղաքների միջի տարածութեան $\frac{5}{8}$ մասը Հաւասար է 20 վերստին: 1 վերստը այդ տարածութեան ո՞ր մասն է կազմում:

449. Հողեկառքը 1 ժամում անցնում է $38\frac{4}{7}$ վերստ տարածութիւն: 1 ըսպէում ո՞րքան տարածութիւն կանցնի:

450. Մի գործի $\frac{6}{13}$ մասը Համար վճարեցին 42 ըուրլի: Ո՞րքան փող պէտք է վճարեն ամբողջ գործի Համար:

450. Բանուորը 5 ժամում շինեց գործի $\frac{10}{23}$ մասը: Ո՞րքան ժամանակում կը վերջացնի ամբողջ գործը:

451. Ճանապարհորդը $3\frac{1}{2}$ ժամում անցաւ ամբողջ ճանապարհի $\frac{5}{8}$ մասը: Քանի ժամում կանցնի ամբողջ ճանապարհը:

451. Մի կտոր պղնձի $\frac{6}{7}$ մասը կշռում է $8\frac{11}{14}$ գրվանքայ: Ամբողջ կտորը ո՞րքան կ'կշռի:

452. Մի մարդ $2\frac{1}{2}$ ամսում ստացաւ $194\frac{1}{4}$ ռ. ուճիկ: Նա ո՞րքան ուճիկ կ'ստանայ $3\frac{1}{3}$ ամսում:

452. $6\frac{9}{32}$ գրվ. թէյի Համար վճարել են $12\frac{9}{16}$ ռ.: Ո՞րքան կարժենայ $4\frac{5}{8}$ գրվ. թէյը:

453. Սպիտակ Հացի $3\frac{4}{5}$ գրվ. արժէ $13\frac{3}{10}$ կ., իսկ սև Հացի $10\frac{3}{4}$ գրվ. արժէ $32\frac{1}{4}$ կ.: Քանի անգամ սպիտակ Հացը թանկ է սև Հացից:

453. $1\frac{3}{16}$ գրվ. ոսկին արժէ $405\frac{15}{64}$ ռ., իսկ $5\frac{1}{13}$ գրվ. արծաթն արժէ $115\frac{1}{2}$ ռ.: Քանի անգամ ոսկին արծաթից թանկ է:

454. Ջրով լի աւազանից առաջին անգամ զուրս թափեցին բոլոր ջրի $\frac{11}{18}$ մասը, իսկ երկրորդ անգամ՝ $\frac{1}{45}$ մասը, որից լետոյ աւազանի մէջ մնաց 110 վեդրո ջուր: Քանի վեդրո ջուր է տանում աւազանը:

454. Մի զիւղացի ցանեց վարելահողի $\frac{5}{16}$ մասը, երկրորդը $\frac{7}{20}$ մասը, իսկ երրորդը մնացած $7\frac{1}{5}$ դեսեատինը: Ամբողջ վարելահողը քանի դեսեատին էր:

455. 18 բանուոր $14\frac{2}{5}$ օրում մի ջրանցք փորեցին, որի երկարութիւնը $1\frac{1}{5}$ վերստ էր: 1 բանուոր 1 օրում սրքան էր փորում:

455. 4 գրազիր 15 օրում, օրական $6\frac{1}{5}$ ժամ աշխատելով, արտադրեցին $223\frac{1}{5}$ թերթ թուղթ: Ո՞րքան թերթ կարտադրի 1 գրազիրը 1 օրում, եթէ օրական 1 ժամ աշխատի:

456. Կառքի առաջի անիւի շրջապատը $2\frac{13}{25}$ արշին է, իսկ յետևի անիւի շրջապատը $2\frac{3}{100}$ արշինով մեծ է: 1386 արշին տարածութեան վրայ առաջի անիւը յետևի անիւից սրքան պտոյտ աւելի կանի:

456. Կառքի յետևի անիւի շրջապատը $1\frac{3}{4}$ սափէն է, իսկ առաջի անիւի շրջապատը գրանից $1\frac{1}{2}$ անգամ փոքր է: Ո՞րքան պտոյտ կանի ամեն մէկ անիւը $2\frac{4}{5}$ վերստ տարածութեան վրայ և առաջի անիւը սրքան անգամ արագ կը պտտի յետևի անիւից:

457. Մի մեքենայ $\frac{5}{6}$ ժամում պատրաստում է $\frac{15}{16}$ փութ մեխ, երկրորդը $\frac{1}{3}$ ժամում $\frac{5}{12}$ փ., իսկ երրորդը $\frac{5}{8}$ ժամում $\frac{7}{8}$ փ.: Երեքը միասին սրքան ժամանակում կը պատրաստեն 151 փ. մեխը:

457. Մէկ խողովակով $\frac{3}{4}$ ժամում լցում է աւաղանի $\frac{1}{12}$ մասը, երկրորդ խողովակով $\frac{5}{8}$ ժ. լցում է աւաղանի $\frac{3}{40}$ մասը, իսկ երրորդ խողովակով $\frac{2}{3}$ ժ. լցում է $\frac{58}{675}$ մասը: Երեք խողովակները միասին սրքան ժամանակում կը լցեն $\frac{3}{5}$ մասը:

458. Երեք թուերի գումարը հաւասար է $26\frac{8}{11}$: Առաջին թիւը $3\frac{1}{3}$ անգամ, իսկ երկրորդը $2\frac{1}{5}$ անգամ մեծ է երրորդից: Գտնել այդ թուերը:

458. Երեք թուերի գումարը հաւասար է $19\frac{1}{3}$: Առաջին թիւը երկրորդից մեծ է $1\frac{1}{4}$ անգամ, իսկ երրորդի $\frac{3}{4}$ մասը հաւասար է երկրորդի $\frac{1}{8}$ մասին: Գտնել այդ թուերը:

459. Ի՞նչ կը լինի քանորդը, եթէ բաժանելին բաժանենք $2\frac{1}{3}$ -ի վրայ, իսկ բաժանարարը՝ $3\frac{4}{15}$ -ի վրայ:

459. Ի՞նչ կը լինի երկու արտադրիչների արտադրեալը, եթէ մէկ արտադրիչը բազմապատկենք $3\frac{7}{15}$ -ի վրայ, իսկ միւսը բաժանենք $4\frac{5}{14}$ -ի վրայ:

460. Երեք թուերի արտադրեալը հաւասար է $4\frac{1}{5}$ -ին: Մէկ արտադրիչը հաւասար է $\frac{3}{8}$ -ին, իսկ միւսը $2\frac{2}{3}$ -ին: Գտնել երրորդ արտադրիչը:

460. Բաժանելու $\frac{8}{11}$ մասը հաւասար է 44, իսկ բաժանարարի $\frac{3}{7}$ մասը հաւասար է $\frac{1}{4}$: Գտնել քանորդը:

461. $12\frac{2}{3}$ -ը սր թուի վրայ պէտք է բազմապատկենք, որ ստացուի $2\frac{3}{8}$ -ի և $1\frac{3}{4}$ -ի քանորդը:

461. $2\frac{5}{12}$ -ը սր թուի վրայ պէտք է բազմապատկենք, որ ստացուի մի թիւ, որը $\frac{2}{3}$ մասը հաւասար է $7\frac{1}{4}$ -ին:

Հետևեալ օրինակների մէջ ցոյց տուած գործողութիւնները կատարել՝

462. $(4\frac{7}{15} - \frac{9}{25} + 3\frac{4}{9}) : 22\frac{49}{75}$

462. $(1\frac{1}{2} + \frac{1}{3} + \frac{1}{4} + \frac{1}{6}) : \frac{3}{4}$

463. $(4\frac{7}{9} + 1\frac{1}{2} + 2\frac{5}{6}) : (2\frac{1}{3} - 1\frac{7}{9})$

463. $(4\frac{1}{5} - 3\frac{1}{4} + \frac{2}{15}) : (\frac{1}{2} - \frac{1}{3} + \frac{1}{4})$

464. $[(1\frac{3}{4} + 1\frac{1}{10}) : (3\frac{3}{10} - 2\frac{1}{30})] \cdot \frac{2}{9}$

464. $3\frac{2}{3} : [(1\frac{1}{5} - \frac{5}{6}) : (\frac{1}{2} + \frac{4}{5})]$

465. $[(1\frac{5}{12} + 4\frac{1}{20}) \cdot 4\frac{1}{5} - (2\frac{1}{5} - \frac{5}{8}) : 1\frac{1}{8}] : 12\frac{4}{25}$

465. $\frac{1}{20} : [(1\frac{1}{4} + 3\frac{7}{8} - 3\frac{1}{24}) : 3\frac{1}{3} + 3\frac{1}{3} : (1\frac{1}{4} + 3\frac{7}{8} - 3\frac{1}{24})]$

466. $\frac{\frac{3}{4} + \frac{3}{5} + \frac{3}{10}}{2 - 1\frac{1}{100}}$ 466. $\frac{(1\frac{7}{60} - \frac{7}{90}) \cdot \frac{2}{11}}{11\frac{1}{45} - \frac{3}{20}}$

467. $\frac{(12\frac{4}{5} \cdot 3\frac{3}{4}) - (4\frac{4}{11} \cdot 4\frac{1}{8})}{11\frac{2}{3} \cdot 2\frac{4}{7}}$

467. $\frac{(28\frac{4}{5} : 13\frac{5}{7}) + (6\frac{3}{5} : \frac{2}{3})}{11\frac{1}{16} : 2\frac{1}{4}}$

468. $\frac{(\frac{3}{17} + \frac{5}{34} + \frac{1}{2}) \cdot (1 - \frac{11}{28})}{(9 : \frac{6}{11}) - (2\frac{1}{3} \cdot \frac{5}{14})}$

468. $\frac{[1\frac{3}{5} - (\frac{2}{7} : \frac{5}{23})] \cdot 3\frac{1}{2}}{1 + (1 : \frac{1}{2}) + (1 : \frac{1}{5})}$

469. $\frac{(8^{1/4} - 3^{3/8}) : 3^{1/2} + (3^{1/8} - 1^{7/8}) \cdot 1^{3/5}}{(5 - 4^{2/5}) \cdot 10} + \frac{(3^{1/8} - 1^{7/8}) \cdot 1^{3/5}}{(2 - 1^{3/8}) : 3^{1/8}}$
469. $\frac{(5 \cdot 3^{3/4} + 9^{1/6}) \cdot 1^{1/5}}{(10^{3/10} - 8^{1/2}) \cdot 5^{5/9}} - \frac{(6^{1/5} - 3^{3/7}) \cdot 5^{5/6}}{3^{2/3} - 3^{1/6}} - 36^{1/6}$
470. $\left[\frac{(1^{1/4} - 1/8 + 2^{1/5}) \cdot 1/7}{8 - (1 : 1/7)} - \frac{1/5}{1 - 1/5} \right] : 1^{7/20}$
470. $\left\{ \frac{(2^{1/5} - 1/20) + [1 : (1/3 - 1/4)]}{[(5^{3/7} - 1/14) : 1^{1/2}] + 3^{1/35}} + \frac{1/5 + 1/8}{1/5 - 1/8} \right\} : 1^{13/44}$
471. $1 - \left\{ \frac{[(4 : 1/4) - (2^{1/3} \cdot 3/7) - (1/2 + 1/3 - 1/4) \cdot 1^{5/7}]}{[(3^{1/8} \cdot 3/50) + 2^{13/16} - 2^{1/9} + (3 : 3/7)]} : 9^{32/41} \right\}$
471. $\left\{ 1 : \left[\frac{(1^{3/5} + 2^{1/4}) \cdot 5^{5/77}}{[(3/7 - 1/4) : 3/28] - 1} + \frac{1 : 1/11}{(5 \cdot 1/25) - 1/10 + 1} \right] \right\} : 1^{1/166}$

§ 14. Կոտորակային անուանական թուեր:

ա) վերածուսն եւ անդրադարձումը:

472. վերածել՝ ա) $3^{3/25}$ ը. կոպէկներէ, ը) $5^{5/6}$ տարին ամիսներէ, գ) $7^{7/36}$ սաժ. մատնաչափերի, ղ) $10^{10/60}$ փ. մսխալների, ն) $1^{7/16}$ օդ. թերթերի, գ) $3^{1/5}$ արշ. վերշոկների, է) 4 վ. $2^{5/6}$ սաժ. ոտնաչափերի, ը) $2^{3/4}$ ժ. $15^{1/2}$ ը. $5^{1/2}$ վայրկ. վայրկեանների:
472. վերածել՝ ա) $3^{1/15}$ ժամը ըոպէների, ը) $7^{7/125}$ վերտը սաժէներէ, գ) $3^{1/240}$ օրը ըոպէների, ղ) $11^{1/13}$ ժամը վայրկեանների ն) $4^{3/7}$ փ. գրվանքաների, գ) $3^{5/21}$ գրվ. մսխալների, է) $3^{1/2}$ օդ. $1^{4/5}$ դաստ. թերթերի, ը) $4^{2/3}$ փ. $10^{1/2}$ գրվ. $4^{1/3}$ լ. մսխալների:
473. վերածել՝ ա) $4^{5/12}$ ք. ոտն. ք. մատնաչափերի, ը) $3^{1/4}$ ք. արշ. $69^{5/8}$ ք. վերշոկը քառ. վերշոկների, գ) $2^{3/16}$ դեանատինը ք. սաժէներէ:
473. վերածել՝ ա) $6^{2/3}$ խ. սաժէնը խ. արշինների, ը) $2^{1/6}$ խ. ոտն. $5^{1/8}$ խ. մատ. խ. մատնաչափերի, գ) $11^{1/16}$ խ. արշ. $2^{1/2}$ խ. վերշոկը՝ խ. վերշոկներէ:

- Արտայայտել բարդ անուանական թուերով՝
474. ա) $9^{9/25}$ փ., ը) $1^{9/800}$ վերտ, գ) $7^{7/16}$ շաբաթ, ղ) $7^{7/32}$ դեղատան գրվ, ն) $5^{3/8}$ ք. սաժ.:
474. ա) $5^{5/225}$ օր, ը) $4^{4/15}$ օդ., գ) $1^{5/11}$ մղոնը, ղ) $11^{1/12}$ չետ-վերտը, ն) $3^{5/12}$ խ. սաժ.:
475. Մետրը հաւասար է $1^{2/5}$ արշինին: Մետրը քանի վերշոկին է հաւասար:
475. Կիլօգրամմը հաւասար է $2^{7/16}$ գրվ.: Կիլօգրամմը քանի մսխալին է հաւասար:
476. 1 խոր. մատնաչափ ջուրը կշռում է $1^{1/25}$ գրվ.: Այս քաշը արտայայտել բարդ անուանական թուերով:
476. Լուսինը երկրի շուրջը պտտում է $27^{101/300}$ օրում: Այս ժամանակը արտայայտել բարդ անուանական թուերով:
477. Անդրադարձնել՝ ա) $2^{2/5}$ կոպէկը ըոբլիններէ, ը) $5^{5/8}$ գրվ. փթերի, գ) $3^{3/5}$ ըոպէն ժամերի, ղ) $2^{2/11}$ արշինը վերտերի, ն) $1^{1/2}$ ըոպէն օրերի, գ) 1 օր $9^{3/5}$ ժ. շաբաթներէ, է) 1 ոտ. $5^{1/2}$ մատ. արշինների, ը) $1^{1/14}$ ք. վերտը դեանատիններէ, թ) $1^{1/4}$ ք. արշ. $3^{1/16}$ ք. մատ. քառ. սաժէներէ:
477. Անդրադարձնել՝ ա) $5^{1/2}$ կոպէկը ըոբլիններէ, ը) $4^{4/5}$ վերշ. արշիններէ, գ) $9^{9/16}$ մսխ. փթերի, ղ) $1^{2/7}$ սաժ. վերտերի, ն) $2^{2/5}$ թերթը օգմաների, գ) 2 գրվ. $6^{1/4}$ լ. փթերի, է) 25 մսխ. $15^{5/6}$ դոլ. լոտերի, ը) 5 գրվ. 22 լ. $2^{4/7}$ մսխ. փթերի, թ) 15 խ. արշ. $20^{3/4}$ խ. վերշոկը խ. սաժէներէ:
478. 81 օր 2 ժ. 40 ըոպ. հասարակ տարուայ ո՞ր մասն է կազմում:
478. 71 սաժ. 1 արշ. $4^{1/7}$ վերշ. վերտի ո՞ր մասն է կազմում:
479. Կիլօգրամմը հաւասար է 2 գրվ. 42 մսխալին: Կիլօգրամմը փթի ո՞ր մասն է կազմում:
479. Մետրը հաւասար է 3 ոտ. 3 մատ. 2 դճաչափին: Արշինը մետրի ո՞ր մասն է կազմում:
- բ) Գումարումն եւ հանումը:
480. $2^{3/8}$ վերտ + 1 վերտ $206^{1/2}$ սաժ.
480. $7^{1/9}$ փ. + 2 փ. $4^{2/5}$ գրվ.

481. $3\frac{5}{14}$ սաժ. + 1 ս. 4 ոտ. + 1 ս. $2\frac{3}{4}$ ոտ.
481. $1\frac{3}{10}$ օր. + 3 ժ. $15\frac{1}{4}$ ր. + 3 ր. $2\frac{1}{4}$ վայրկ.
482. 8 օդ. $20\frac{1}{2}$ դ. + 5 օդ. 18 դ. $10\frac{3}{8}$ թերթ.
482. 4 ամիս 17 օր $21\frac{3}{4}$ ժ. + 9 ամիս 15 օր $8\frac{2}{3}$ ժ.
483. $\frac{3}{5}$ օր + $\frac{3}{5}$ ժամ + $\frac{3}{5}$ րոպէ.
483. $3\frac{1}{2}$ փ. + 6 զրվ. + $5\frac{1}{3}$ ւ.
484. $5\frac{3}{14}$ արշ. + $2\frac{1}{3}$ ոտ. + $7\frac{1}{2}$ մատն.
484. $\frac{1}{2}$ շաբ. + $6\frac{1}{2}$ օր + $2\frac{3}{4}$ ժ.
485. $1\frac{3}{8}$ դեսեատին + 1600 ք. սաժ. + $2\frac{2}{5}$ դեսեատին.
485. $2\frac{5}{8}$ խ. սաժ. + $\frac{1}{4}$ խ. արշ. + $6\frac{2}{3}$ խ. վերշ.
486. Գրավաճառը մի զիրք տպելու համար գնեց $20\frac{1}{4}$ օդմա $15\frac{3}{8}$ դաստա թուղթ, յետոյ նորից գնեց $6\frac{7}{12}$ օդմա և վերջապէս 2 օդ. $\frac{5}{6}$ դաստա: Գիրքը տպելու համար սրբան թուղթ գործ դրեց:
486. Վաճառականը չորս տեսակ սորձից խառնուրդ կազմեց: Առաջին տեսակից վերցրեց $\frac{5}{12}$ փ., երկրորդից՝ $23\frac{1}{4}$ զրվ., երրորդից՝ $14\frac{7}{8}$ զրվ., իսկ չորրորդից՝ $31\frac{1}{48}$ փ.: Նա սրբան խառնուրդ ստացաւ:
487. Պղնձգործն ունէր երեք կտոր պղինձ: Առաջին կտորը կշռում էր 3 զրվ. $10\frac{1}{4}$ ւ., երկրորդը 2 զրվ. $1\frac{1}{2}$ մսխ., իսկ երրորդը երկրորդից 1 զրվ. $2\frac{1}{8}$ ւ. ծանր էր: Նա ընդամենը սրբան պղինձ ունէր:
487. Մի մարդ չորս կալուածք ունէր: Առաջինը $59\frac{3}{8}$ դեսեատին էր, երկրորդը $1\frac{3}{4}$ դես. աւելի էր առաջինից, երրորդը $48\frac{7}{12}$ դես. էր, իսկ չորրորդը երրորդից 3 դես. 800 ք. սաժ. աւելի էր: Նա ընդամենը սրբան դեսեատին կալուածք ունէր:
488. Հարկաւոր է սուաղել տան զրօի պատերը, որոնք $100\frac{2}{3}$ ք. սաժ. և $5\frac{1}{2}$ ք. արշ. են, ներսի պատերը, որոնք 150 ք. սաժ. $9\frac{3}{4}$ ք. արշ. են և առաստաղները, որոնք 61 ք. սաժ. $4\frac{7}{24}$ ք. արշ. են: Ընդամենը սրբան տեղ պէտք է սուաղել:
488. Երեք մշակ մի լճակ փորեցին: Առաջինը փորեց $13\frac{5}{6}$ խ. սաժ., երկրորդը առաջինից $4\frac{1}{8}$ խ. արշին աւելի փորեց,

- իսկ երրորդը առաջին և երկրորդ մշակների փորածից $\frac{7}{9}$ խ. սաժ. $1\frac{1}{2}$ խ. արշին աւելի փորեց: Երեքը միասին սրբան փորեցին:
489. Մանրավաճառը մէկի վրայ ծախեց $\frac{1}{10}$ փ. շաքար, երկրորդի վրայ $2\frac{1}{4}$ զրվ., երրորդի վրայ առաջինից $1\frac{1}{5}$ ւ. աւելի, իսկ չորրորդի վրայ երկրորդից $\frac{1}{8}$ զրվ. աւելի. նրա մօտ դարձեալ մնաց $10\frac{1}{2}$ ւ. $\frac{3}{10}$ մսխալ շաքար: Նա ընդամենը սրբան շաքար ունէր:
489. Ժամացույցը երկուշաբթի օրը յետ մնաց $4\frac{1}{2}$ րոպէ, երեքշաբթի 1 րոպէ 4 վայրկեան աւելի, չորեքշաբթի $\frac{7}{12}$ ր., հինգշաբթի $3\frac{1}{4}$ րոպէ, ուրբաթ 35 վայրկեան, շաբաթ $1\frac{1}{5}$ րոպէ, իսկ կիւրակի $2\frac{1}{3}$ ր. 10 վայրկեան: Ժամացույցը մէկ շաբաթուալ ընթացքում սրբան յետ մնաց:
490. 2 փ. 7 զրվ. $9\frac{1}{4}$ ւ. — 1 փ. 23 զրվ. $21\frac{7}{10}$ ւ.
490. 4 վերստ 1 ս. $1\frac{1}{3}$ արշ. — 3 վ. 400 ս. $2\frac{2}{7}$ արշ.
491. 10 օր $31\frac{1}{40}$ ժ. — 2 օր 6 ժ. $5\frac{1}{3}$ ր.
491. 5 փ. $9\frac{1}{4}$ զրվ. — 3 փ. $7\frac{1}{2}$ ւ.
492. $1\frac{3}{4}$ օդ. — 6 դ. $20\frac{1}{2}$ թ.
492. $1\frac{3}{5}$ ամսից — 11 օր $4\frac{3}{4}$ ժ.
493. $\frac{5}{36}$ օր. — $1\frac{1}{2}$ ժ. 493. $\frac{2}{3}$ փ. — $\frac{2}{3}$ զրվ.
494. $\frac{2}{7}$ սաժ. — $3\frac{1}{2}$ մատ. 494. $\frac{1}{13}$ փ. — $3\frac{3}{4}$ մսխ.
495. $\frac{3}{4}$ ք. վերստ. — 41 դես. 111 ք. սաժ.
495. $3\frac{1}{3}$ խ. սաժ. — $2\frac{1}{2}$ խ. արշ. 555 խ. մատն.
496. Երծաթէ ափսէն, որի քաշն է 1 զրվ. $10\frac{1}{2}$ ւ. $1\frac{3}{4}$ մսխ., իւր մէջ պարունակում է $10\frac{3}{5}$ ւ. 2 մսխ. 8 զոլ. պղինձ: Նրա մէջ սրբան գուտ արծաթ կայ:
496. $5\frac{1}{7}$ արշին երկարութեամբ ձողի 5 ոտ. 11 մատ. թաղուած է գետնի մէջ: Ո՞րքանն է մնում գետնից գուրս:
497. $3\frac{1}{2}$ սաժ. երկարութեամբ մի կտոր մահուղից առաջին անգամ կտրեցին $4\frac{3}{4}$ ստն., երկրորդ անգամ՝ $1\frac{2}{7}$ արշին: Ո՞րքան մնաց:
497. Պղնձից, անաղից և արծձից կազմեցին մի հալուածք, որի քաշն էր 3 զրվ. $24\frac{19}{24}$ ւ.: Այդ հալուածքը կազմելու հա-

մար վերջերին $18\frac{7}{12}$ Լ. արճիճ և 1 գրվ. 7 Լ. 2 մսխ. 64 գ. անագ: Ո՞րքան պղինձ խառնեցին:

498. Վաճառականը $8\frac{7}{8}$ փ. ալիւր ունէր: Մէկի վրայ նա ծախեց 2 փ. $1\frac{1}{2}$ գրվ. , երկրորդի վրայ $\frac{7}{20}$ գրվ. պակաս. երրորդի վրայ $1\frac{2}{5}$ փ., իսկ չորրորդի վրայ՝ երկրորդի վրայ ծախած ալիւրից 1 գրվ. $2\frac{1}{2}$ Լ. պակաս: Նրա մօտ ո՞րքան ալիւր մնաց:

498. 5 սաժ. 5 ոտ. $10\frac{3}{8}$ մատ. երկարութեամբ պարանը չորս մաս է արուած: Առաջին կտորի երկարութիւնն է 1 ս. 3 ոտ. $9\frac{5}{8}$ մատ., երկրորդը առաջինից 2 ոտ. $11\frac{1}{2}$ մատ. կարճ է, իսկ երրորդը երկրորդից $4\frac{2}{7}$ վերջ. կարճ է: Գտնել չորրորդ կտորի երկարութիւնը:

499. Կալուածատէրն ունէր $150\frac{5}{6}$ դեսետին անտառ: Առաջ ծախեց $31\frac{3}{4}$ դեսետին, յետոյ 25 դես. $408\frac{1}{2}$ ք. սաժ.: Ո՞րքան դես. անտառ մնաց:

499. Մէկ խճուղի շինելու համար առաջին անգամ բերին 12 խ. սաժ. $4\frac{1}{5}$ խ. արշին խիճ, երկրորդ անգամ՝ 3 խ. սաժ. $5\frac{1}{2}$ խ. ոտ. պակաս: իսկ երրորդ անգամ երկրորդ անգամից 39 խ. արշին $15\frac{3}{4}$ խ. մատն. պակաս: Ընդամենը ո՞րքան խիճ հարկաւորուեց:

500. $3\frac{1}{8}$ մետրը քանի վերջուով երկար է $4\frac{1}{4}$ արշինից: (Մետրը= $1\frac{2}{5}$ արշ.):

500. $33\frac{8}{9}$ կիլօգրամմից հանել 1 փ. 1 գրվ. 10 Լ. 2 մսխ.: (Կիլօգրամմը= $2\frac{2}{5}$ գրվ.):

գ) Բազմապատկումն և բաժանումը:

- 501. 7 ս. $2\frac{3}{4}$ արշ. \times 7
- 502. 4 փ. $6\frac{2}{3}$ գր. \times $\frac{1}{7}$
- 503. 5 վերստ $447\frac{5}{8}$ ս. \times $2\frac{1}{2}$
- 504. 9 փ. 27 գրվ. $85\frac{1}{3}$ մսխ. \times $9\frac{8}{9}$
- 504. 4 օր 5 ժ. $21\frac{3}{4}$ վայրկ. \times $10\frac{2}{3}$
- 505. 87 օգ. $9\frac{5}{24}$ թ. \times $9\frac{3}{7}$
- 505. 11 ամիս $\frac{3}{10}$ ժամ \times $\frac{5}{8}$
- 501. 13 գր. $7\frac{2}{3}$ Լ. \times 5
- 502. 1 վերստ $126\frac{3}{7}$ ս. \times $\frac{3}{11}$
- 503. 5 տ. $7\frac{17}{20}$ ամիս \times $10\frac{5}{8}$

506. Գտնել 2 օր $5\frac{1}{4}$ ժամի $\frac{2}{15}$ մասը:

506. Գտնել 3 գրվ. 10 Լ. $2\frac{1}{2}$ մսխալի $\frac{16}{16}$ մասը:

507. Գումարել 20 գրվ. 13 Լ. 2 մսխալի $\frac{3}{5}$ մասը 24 գր. 21 Լ. $2\frac{5}{11}$ մսխալի $\frac{11}{12}$ մասի հետ:

507. 7 վերստ $437\frac{1}{2}$ սաժէնի $\frac{4}{9}$ մասից հանել 9 վերստ 165 ս. 2 արշ. $5\frac{1}{3}$ վերջուկի $\frac{3}{8}$ մասը:

508. Գնդակը 1 վայրկեանում անցնում 280 ս. $6\frac{2}{3}$ ոտ. ամրանաձիթիւն: $4\frac{5}{8}$ վայրկեանում ո՞րքան կանցնի:

508. Չայնը 1 վայրկեանում անցնում է 143 ս. $1\frac{9}{14}$ արշ. տարանձուժիւն: $5\frac{9}{8}$ րոպէում ո՞րքան կանցնի:

509. Մահուղի արշինն արժէ $2\frac{3}{4}$ ր.: Ո՞րքան կարժենայ 15 արշ. $8\frac{1}{2}$ վերջ.:

509. Արձաթի գրվ. արժէ $28\frac{4}{5}$ ր.: Ո՞րքան կարժենայ 13 գրվ. $1\frac{1}{8}$ մսխ. արձաթը:

510. Պատի 1 քառ. արշինը ներկելու համար հարկանորում է $18\frac{2}{3}$ մսխ. ներկ: Ո՞րքան ներկ կերթայ մի պատ ներկելու համար, որի մակարդակն է 48 ք. սաժ. $7\frac{1}{2}$ ք. արշ.:

510. Առաստաղի 1 քառ. սաժէնը սուղելու համար հարկաւորում է 21 խ. ոտ. $495\frac{9}{25}$ խ. մատ. դաճ: Ո՞րքան դաճ կերթայ երեք առաստաղ սուղելու համար, եթէ առաջինի մակարդակն է 4 ք. սաժ. $6\frac{1}{3}$ ք արշ., երկրորդինն է 3 ք. ս. $4\frac{3}{8}$ ք. արշ., իսկ երրորդինը՝ 3 ք. ս. $7\frac{7}{24}$ ք. արշ.:

511. Մետրը= 1 արշ. $6\frac{2}{5}$ վերջ.: Արտայայտել ռուսական չափերով $5\frac{1}{4}$ մետրը:

511. Կիլօգրամմը= 2 գրվ. 12 Լ. $2\frac{2}{5}$ մսխ.: Արտայայտել ռուսական չափերով $3\frac{2}{3}$ կիլօգրամմը:

- 512. 30 օգ. $10\frac{5}{12}$ գ. : 10
- 512. 24 վերստ $300\frac{3}{4}$ սաժ. : 48
- 513. 5 ամիս 7 օր 14 ժ. $17\frac{2}{5}$ ր. : $\frac{1}{8}$
- 513. 3 փ. 5 գրվ. $2\frac{2}{5}$ մսխ. : $\frac{4}{7}$
- 514. 9 ս. $7\frac{7}{9}$ վերջ. : $\frac{12}{13}$
- 514. 13 օգ. $18\frac{1}{2}$ թ. : $\frac{21}{26}$
- 515. 9 բերկ. $35\frac{1}{2}$ մսխ. : $7\frac{5}{9}$

515. 3 ամիս $55\frac{3}{11}$ վայրկ. : $8\frac{4}{7}$
516. 2 փ. $3\frac{1}{8}$ դրվ. : $9\frac{1}{2}$ դրվ.
516. $2\frac{5}{8}$ օդ. : 2 օդ. $12\frac{1}{2}$ դաս.
517. $7\frac{2}{3}$ մսխ. : 23 լ. $1\frac{11}{12}$ մսխ.
517. 1 դրվ. $18\frac{2}{3}$ լ. : 6 փ. $17\frac{3}{32}$ դրվ.
518. 30 ս. 2 արշ. $5\frac{1}{2}$ վերշ. : 3 ս. 2 արշ. $8\frac{11}{16}$ վերշ.
518. 1 օր 13 փ. 55 ր. $11\frac{2}{3}$ վ. : 7 փ. 35 ր. $2\frac{1}{3}$ վ.
519. 4 փ. 27 դրվ. $1\frac{11}{15}$ մսխ. քանի անգամ փոքր է 14 փ. 1 դրվ. 1 լ. $2\frac{1}{5}$ մսխալից:
519. Ո՞րքան անգամ 13 փ. $40\frac{7}{10}$ ր. շատ է 3 փ. $25\frac{7}{40}$ րոպէից:
520. 8 լ. $1\frac{13}{16}$ մսխալի $\frac{2}{7}$ մասը քանի անգամ շատ է 3 լ. $\frac{7}{32}$ մսխալի $\frac{3}{5}$ մասից:
520. 3 օդ. $10\frac{1}{2}$ դաստայի $\frac{2}{3}$ մասը քանի անգամ փոքր է 15 օդ. 13 դ. և 8 թերթի $\frac{3}{4}$ մասից:
521. Կառքի առաջի անիւի շրջապատն է 2 արշ. $7\frac{3}{4}$ վերշ. : $\frac{53}{100}$ վերտտ տարածութեան վրայ նա քանի պտոյտ կանի:
521. Մի գոյգ մոմակալի համար գործ դրին 1 դրվ. 8 լ. 2 մսխալ $38\frac{2}{5}$ դողեա արծաթ: $6\frac{3}{8}$ դրվ. արծաթից քանի հատ մոմակալ դուրս կրգայ:
522. Գտնել այն թիւը, որի $\frac{5}{8}$ մասը կազմում է 3 փ. 4 դրվ. $5\frac{1}{2}$ մսխ.:
522. Եկեղեցու բարձրութիւնը կազմում է զանգակատան բարձրութեան $\frac{5}{6}$ մասը: Ո՞րքան է զանգակատան բարձրութիւնը, եթէ եկեղեցու բարձրութիւնն է 105 ս. 1 արշ. $\frac{7}{8}$ վերշոկ:
523. Տոպրակից հանեցին նրա մէջ եղած շաքարաւաղի $\frac{4}{15}$ մասը, որից լիտոյ նրա մէջ մնաց 5 դրվ. 10 լ. $2\frac{3}{10}$ մսխալ: Տոպրակի մէջ ո՞րքան շաքարաւաղ կար:
523. Երեք խումբ բանուոր մի ջրանցք փորեցին: Առաջին խումբը փորեց ջրանցքի $\frac{4}{15}$ մասը, երկրորդը՝ $\frac{5}{12}$ մասը, իսկ երրորդը՝ մնացած 13 ս. 1 արշ. 6 վերշ.: Ո՞րքան է ջրանցքի երկարութիւնը:

524. 3 վերտտ 366 ս. $4\frac{2}{3}$ ոտ. մէջ քանի կիլոմետր է պարունակում: (Մետրը= $1\frac{2}{5}$ արշ.):
524. 12 դրվ. 15 լ. $2\frac{1}{4}$ մսխալի մէջ ո՞րքան կիլոգրամմ է պարունակում: (Գրամմը= $1\frac{17}{500}$ մսխալի):

§ 15. Հասարակ կոտորակների վերաբերեալ ընդհանուր կանոններ:

525. Խանութում զնել են $2\frac{3}{4}$ դրվ. թէյ, զրվանքան $2\frac{2}{5}$ ռուբլիով, $10\frac{1}{3}$ դրվ. շաքար, զրվանքան $\frac{3}{20}$ ռուբլիով և մի քանի զրվանքայ սուրճ. բոլորին վճարել են $14\frac{39}{40}$ ռ. : Ո՞րքան դրվ. սուրճ են զնել, եթէ $\frac{5}{6}$ դրվ. արժէ 65 կ.:
525. Արծաթագործը $3\frac{7}{8}$ դրվ. արծաթից շինեց երկու դիւժին սեղանի և երեք դիւժին թէյի դղալներ: Սեղանի իւրաքանչիւր դղալը կշռում էր $9\frac{1}{4}$ մսխ., իսկ թէյի իւրաքանչիւր դղալը $2\frac{1}{6}$ մսխ.: Մնացած արծաթից նա շինեց բաժակներ, իւրաքանչիւրը 8 լոտ ծանրութեամբ: Նա քանի բաժակ պատրաստեց:
526. Վաճառականը մի կտոր թաւիշ ունէր, որի երկարութիւնը 112 արշ. էր և արշինն արժէր $12\frac{3}{4}$ ռ. : Այդ կտորի $\frac{2}{3}$ մասը ծախեց արշինը $14\frac{1}{4}$ ռուբլիով: Մնացած կտորի իւրաքանչիւր արշինը նա ո՞րքանով պէտք է ծախէր, որ բոլորի մէջ աշխատէր ամբողջ ապրանքի արժողութեան $\frac{1}{9}$ մասը:
526. Վաճառականը զնեց $2\frac{1}{20}$ փ. սուրճ, զրվանքան $38\frac{1}{2}$ կոպէկով: Գրանից $9\frac{3}{5}$ դրվ. փչացաւ: Մնացած սուրճի զրվանքան նա ինչպէս պէտք է ծախի, որ բոլորի մէջ 2 ռ. 82 կոպ. օգուտ ստանայ:
527. Երկու զգալ միասին կշռում են 2 լ. $1\frac{1}{2}$ մսխ.: Մէկը միւսից $2\frac{1}{3}$ մսխալով ծանր է: Ամեն մէկը ո՞րքան է կշռում:
527. Երկու կոտորակների գումարը հաւասար է $\frac{5}{6}$ -ին, իսկ զրանց տարբերութիւնը= $\frac{1}{15}$ -ին: Գտնել այդ կոտորակները:
528. Երեք ամանի մէջ $14\frac{1}{4}$ դրվ. վառօդ կայ: Երկրորդ ամանի վառօդը առաջինից 20 լ. $1\frac{1}{8}$ մսխ. շատ է, իսկ եր-

րորդինը երկրորդից 6 լ. $2\frac{1}{4}$ մսխ. քիչ է: Ո՞րքան վառօդ կայ ամեն մէկի մէջ:

528. Գրագիրը 3 ժամում արտագրեց 25 թերթ, երկրորդ ժամում առաջինից $4\frac{1}{2}$ թերթ աւելի արտագրեց, իսկ երրորդ ժամում երկրորդից $7\frac{2}{3}$ թերթ պակաս: Ո՞րքան թերթ արտագրեց ամեն մէկ ժամում:

529. Երկու կտոր գետին միասին կազմում են $35\frac{5}{8}$ դենետտին: Եթէ առաջին կտորից կտրենք 6 դ. 440 ք. սափ. և աւելացնենք երկրորդ կտորին, առաջին կտորը երկրորդից $\frac{11}{15}$ դեսետտինով աւելի կըլինի: Ո՞րքան դեսետտին է ամեն մէկ կտոր գետինը:

529. Երկու թուերի գումարը $= 10\frac{5}{6}$ -ին: Եթէ առաջին թուից հանենք $4\frac{1}{3}$ և աւելացնենք երկրորդին, այն ժամանակ առաջին թիւը երկրորդից դարձեալ շատ կըլինի $\frac{1}{4}$ -ով: Գտնել այդ թուերը:

530. Մի մարդ 5 ժամ ճանապարհորդեց շոգեկառքով, իսկ 1 ժամ շոգենաւով: Նա մի ժամում ո՞րքան ճանապարհ անցաւ շոգեկառքով և ո՞րքան շոգենաւով, եթէ ընդամենը անցաւ $201\frac{1}{2}$ վերստ տարածութիւն և եթէ շոգեկառքը շոգենաւից մի ժամում $20\frac{2}{3}$ վերստ աւելի է անցնում:

530. Գնել են 3 գրվ. թէյ և 20 գրվ. շաքար 11 ռուբլիով: Մէկ գրվ. թէյը մէկ գրվ. շաքարից $2\frac{11}{25}$ ռ. թանկ է: Ի՞նչ արժէ թէյի և շաքարի գրվանքան:

531. Երեք քաղցանի մէջ ջուր կայ: Առաջին և երկրորդ քաղցանի մէջ կայ $20\frac{3}{5}$ վեդրօ, երկրորդ և երրորդի մէջ $40\frac{1}{4}$ վ., իսկ առաջինի և երրորդի մէջ $32\frac{3}{8}$ վ.: Ո՞րքան ջուր կայ ամեն մէկի մէջ:

531. Գտնել երեք կոտորակ, որոնցից առաջինի և երկրորդի գումարը $= \frac{5}{6}$, առաջինի և երրորդի գումարը $= \frac{3}{4}$, իսկ երկրորդի և երրորդի գումարը $= \frac{7}{12}$:

532. Վաճառականը մէկի վրայ ծախեց 7 արշին քաթան և $12\frac{1}{2}$ արշ. չիթ և ստացաւ $9\frac{9}{10}$ ռ., միւս անգամ նոյն գնով ծախեց $58\frac{3}{4}$ արշ. չիթ և 7 արշ. քաթան և ստացաւ $15\frac{9}{20}$ ռ.: Ո՞րքան արժէ քաթանի և չիթի արշինը:

532. Գտնել երկու թիւ, որոնցից առաջինի $\frac{3}{5}$ մասը գումարելով երկրորդի $\frac{5}{7}$ մասի հետ, կստանանք 45, իսկ առաջինի $\frac{3}{5}$ մասը գումարելով երկրորդի $\frac{1}{2}$ մասի հետ կստանանք 36:

533. Եղբօր տարիքի $\frac{2}{5}$ մասը գումարելով քրոջ տարիքի $\frac{1}{8}$ մասի հետ, ստանում ենք 11, իսկ քրոջ տարիքի $\frac{2}{3}$ մասը գումարելով եղբօր տարիքի $\frac{1}{5}$ մասի հետ, ստանում ենք 20: Ամեն մէկը քանի տարեկան է:

533. Գտնել երկու թիւ, որոնցից առաջինի $\frac{1}{4}$ մասը գումարելով երկրորդի $\frac{2}{3}$ մասի հետ կազմում է 22, իսկ առաջինի $\frac{1}{2}$ -ը գումարելով երկրորդի $\frac{5}{6}$ մասի հետ, կազմում է $30\frac{1}{2}$:

534. Երկու աշակերտ միասին ունեն 36 ռ.: Ամեն մէկը ո՞րքան փող ունի, եթէ երկրորդի փողը կազմում է առաջինի փողի $\frac{4}{5}$ մասը:

534. Իմ և եղբօս տարիքը միասին 56 է: Մեզանից ամեն մէկը քանի տարեկան է, եթէ իմ տարիքը կսզմում է եղբօս տարիքի $\frac{3}{4}$ մասը:

535. Գտնել մի այնպիսի կոտորակ, որի համարչի և յայտարարի գումարը հաւասար լինի 65-ին, իսկ համարչը յայտարարից $3\frac{1}{3}$ անգամ փոքր լինի:

535. 40-ը երկու այնպիսի մաս անել, որ մէկը միւսից $1\frac{2}{3}$ անգամ մեծ լինի:

536. Երկու թուերի գումարն է $3\frac{13}{15}$, իսկ զրանց քանորդը $2\frac{2}{9}$: Գտնել այդ թուերը:

536. Երկու թուերի տարբերութիւնն է $7\frac{1}{2}$, իսկ զրանց քանորդը $2\frac{2}{3}$: Գտնել այդ թուերը:

537. Երեք եղբայր միմեանց մէջ բաժանեցին հօրից ստացած 2400 ռ. ժառանգութիւնը այնպէս, որ երկրորդը ստացաւ առաջինի ստացածի $\frac{1}{3}$ մասը, իսկ երրորդը՝ երկրորդի ստացածի $\frac{4}{5}$ մասը: Ո՞րքան ստացաւ ամեն մէկը:

537. 57 ռ. 60 կոպէկի շաքար, թէյ և սուրճ են գնել: Թէյին վճարել են շաքարին վճարած փողի $\frac{9}{17}$ մասը, իսկ սուրճին՝ թէյին վճարած գումարի $\frac{2}{3}$ մասը: Ամեն մէկին ո՞րքան են վճարել:

538. Երեք զամբիւղի մէջ խնձոր կայ: Առաջին զամբիւղի

մէջ եղած խնձորները թիւը կազմում է երկրորդ դամբիւղի խնձորների թաւի $\frac{2}{5}$ մասը, իսկ երկրորդ դամբիւղի խնձորների թիւը՝ երրորդ դամբիւղի խնձորների թաւի $\frac{3}{4}$ մասը: Ո՞րքան խնձոր կայ ամեն մէկ դամբիւղի մէջ, եթէ երրորդ դամբիւղի մէջ երկրորդից 50 խնձոր աւելի է:

538. Մի վաճառականից չորս մարդ մահուկ գնեցին: Երկրորդը գնեց առաջինի գնած ապրանքի $\frac{2}{3}$ մասը, երրորդը՝ երկրորդի գնած ապրանքի $\frac{5}{6}$ մասը, չորրորդը գնեց այնքան, որքան գնել էին երկրորդը և երրորդը միասին: Իմանալ, թէ ամեն մէկը ո՞րքան է գնել, եթէ չորրորդի գնածը առաջինից 4 արշինով աւելի էր:

539. Երկու երեխայ միասին 65 կ. փող ունեն: Առաջինը ծախսեց 10 կ., իսկ երկրորդը 16 կ., որից լիտոյ առաջին երեխայի մօտ մնացած փողը կազմում էր երկրորդի մօտ մնացած փողի $\frac{5}{8}$ մասը: Ամեն մէկը ո՞րքան փող ունէր:

539. Երկու արկղի մէջ կար 6 զրով. 4 լ. $\frac{5}{6}$ մսի. թէյ: Երբ առաջինից երկրորդի մէջ անցան 1 զրով. 16 լ. 2 մսի. $14\frac{2}{3}$ զով. թէյ, այն ժամանակ առաջին արկղի մէջ մնաց երկրորդ արկղի մէջ հաւաքուած թէյի $\frac{5}{7}$ մասը: Իմանալ, թէ ամեն մէկ արկղի մէջ ո՞րքան թէյ կար:

540. Գնել են $5\frac{1}{4}$ արշին թաւիշ, $7\frac{1}{2}$ արշին մահուկ և բոլորին վճարել են 67 ռ. 65 կ.: Ո՞րքան արժէ ամեն մէկի արշինը, եթէ թաւիշի 1 արշինը մահուկի 1 արշինից $1\frac{1}{2}$ անգամ թանկ է:

540. 4 մարդ և 7 կին բանուորներ ստացան 6 ռ. 70 կ. օրավարձ: Ամեն մէկը օրական ո՞րքան էր ստանում, եթէ ամեն մի կնոջ ստացածը կազմում էր տղամարդու ստացածի $\frac{5}{8}$ մասը:

541. Մի ծառայող երկու տեղից տարեկան 1680 ռ. ուճիկ է ստանում: Ամեն մէկ տեղից ամսական նա ո՞րքան է ստանում, եթէ առաջին տեղից 12 ամսում ստանում է այնքան, որքան ստանում է երկրորդ տեղից 9 ամսում:

541. Երկու ճանապարհորդ միաժամանակ դուրս եկան երկու գանազան քաղաքներից և գնում են միմեանց հանդէպ: Նրանք 8 օրից լիտոյ միմեանց պատահեցին: Առաջին ճանապարհորդը

8 օրում անցնում էր այնքան, որքան երկրորդը $7\frac{1}{2}$ օրում: Ամեն մէկը օրական քանի վերստ ճանապարհ էր անցնում, եթէ քաղաքների միջև տարածութիւնն է 1800 վերստ:

542. Երկու եղբայր հօրից 3400 ռ. ժառանգութիւն ստացան: Ամեն մէկը ո՞րքան ստացաւ, եթէ փոքր եղբոր ստացած փողի $\frac{3}{4}$ մասը հաւասար է մեծ եղբոր ստացած փողի $\frac{2}{3}$ մասին:

542. Երկու թուերի գումարն է 40: Առաջինի $\frac{1}{3}$ մասը հաւասար է երկրորդի $\frac{1}{5}$ մասին: Գտնել այդ թուերը:

543. Երկու աշակերտ մի-մի գիրք գնեցին: Առաջինը ծախսեց իւր փողի $\frac{2}{7}$ մասը, իսկ երկրորդը, որի փողը առաջինի փողից 2 ռ. 10 կ. աւելի էր, ծախսեց իւր փողի $\frac{11}{21}$ մասը. դրանից լիտոյ նրանց մօտ մնացած փողերը հաւասար էին: Ամեն մէկը ո՞րքան փող ունէր:

543. Երկու թուերի տարբերութիւնն է 20: Եթէ առաջինից հանենք նրա $\frac{5}{9}$ մասը, իսկ երկրորդից նրա $\frac{1}{5}$ մասը, ապա մնացորդները հաւասար կըլինեն: Գտնել այդ թուերը:

544. Ճանապարհորդն անցաւ ամբողջ ճանապարհի $\frac{5}{7}$ մասը և դարձեալ 20 վերստ: Նա էլի պէտք է անցնէր ամբողջ ճանապարհի $\frac{3}{4}$ մասից 59 վերստ պակաս տարածութիւն: Ամբողջ ճանապարհը քանի վերստ էր:

544. Ես ծախսեցի իմ փողի $\frac{2}{5}$ մասը և դարձեալ 7 ռուբլի. մնացածը կազմում է իմ փողի $\frac{1}{2}$ -ը և դարձեալ 7 ռուբլի: Ես ո՞րքան փող ունէի:

545. Մէկին հարցրին, թէ քանի տարեկան է. նա պատասխանեց. «Եթէ ես ապրեմ դարձեալ այնքան, որքան ապրել եմ, դարձեալ իմ տարիների $\frac{1}{2}$ -ը և $\frac{1}{4}$ -ը և դարձեալ 3 տարի 9 ամիս, այն ժամանակ ես կըլինեմ 100 տարեկան: Նա այժմ քանի տարեկան է:

545. Ես մի թիւ եմ մտածել, որին եթէ աւելացնեմ նրա $\frac{2}{3}$ մասը և դարձեալ $5\frac{1}{6}$, կստանամ մի թիւ, որը իմ մըտածած թուից $2\frac{3}{22}$ անգամ մեծ է: Ես ինչ թիւ եմ մտածել:

546. Վաճառականը փութը 3 ռուբլիով ալիւր գնեց: Տեղափոխելու ժամանակ ալիւրի $\frac{2}{15}$ մասը թրջուեց: Մնացածի փու-

Թր 3 ր. 40 կոպէկով ծախելով, 16 ր. վնաս ստացաւ: Նա քանի փութ ալիւր էր գնել:

546. Վաճառականը զրկանքան 2 ր. 80 կոպէկով թէյ գնեց: Գրա $\frac{2}{5}$ մասը ծախեց զրկանքան $2\frac{1}{2}$ բուրլիով, իսկ մնացածի զրկանքան ծախեց $3\frac{1}{20}$ բուրլիով և բոլորից՝ 66 ր. օգուտ ստացաւ: Նա սրքան թէյ էր գնել:

547. Մանրավաճառը իւր ունեցած նարինջները ծախելիս Հաշուեց, որ եթէ տասնեակը ծախի 60 կոպէկով, $13\frac{1}{4}$ կոպէկաշխատի, իսկ եթէ տասնեակը ծախի 55 կոպէկով, $13\frac{1}{4}$ կ. կրկնասուր: Նա սրքան նարինջ ունէր:

547. Եթէ Ա. կայարանից դուրս եկող երկաթուղու գնացքը 1 վերստ ճանապարհը անցնէր $\frac{1}{10}$ ժամում, Բ. կայարանը կըհասնէր նշանակած ժամանակից $\frac{1}{4}$ ժամ ուշ. իսկ եթէ 1 վերստը անցնէր $\frac{1}{12}$ ժամում, նշանակած ժամանակից $3\frac{1}{2}$ ժամ շուտ կըհասնէր: Որոշել կայարանների հեռաւորութիւնը միմեանցից:

548. Տանտիկիներ Հաշուեց, որ իւր ունեցած շաքարի պաշարը կըբաւականանայ 15 օր. բայց որովհետև ենթադրած չափից օրական $\frac{3}{8}$ գրվ. աւելի ծախսեց, այդ պատճառով պաշարը միայն 12 օր բաւականացաւ: Նա սրքան շաքար ունէր:

548. Գերձակը Հաշուեց, որ նրա մօտ եղած մահուդից կը կարուի կամ 5 վերարկու կամ 28 բաճկոն: Նրա մօտ սրքան մահուդ կար, եթէ ամեն մի բաճկոնի համար $2\frac{7}{8}$ արշ. աւելի քիչ մահուդ էր գնում:

549. Արձաթագործը մի կտոր արձաթ ունէր, որը կշռում էր 1 գրվ. 26 ր. $\frac{1}{6}$ մսխ.: Նա գրանից պատրաստեց 15 հատ սեղանի և թէյի գգալներ: Թէյի գգալը կշռում էր $9\frac{1}{3}$ մսխ., իսկ սեղանի գգալը՝ 4 ր. $\frac{3}{4}$ մսխ.: Նա սրքան սեղանի և թէյի գգալ պատրաստեց:

549. Արճճի և անագի մի կտոր հալուածքը, որը կշռում էր 2 գրվ., ջրի մէջ կորցրեց իւր քաշից $\frac{1}{5}$ գրվ.: Այդ հալուածքի մէջ սրքան արճիճ և սրքան անագ կար, եթէ յայտնի է, որ անագը ջրի մէջ կորցնում է իւր քաշի $\frac{11}{80}$ մասը, իսկ արճիճը $\frac{3}{40}$ մասը:

550. Ա. քաղաքից դուրս եկաւ մի սուրհանդակ և գնում էր Բ. քաղաքը: Միևնոյն ժամանակ Բ. քաղաքից դուրս եկաւ մի երկրորդ սուրհանդակ, որը գնում էր առաջինի հանդէպ: Առաջին սուրհանդակը մի ժամում անցնում էր $11\frac{1}{4}$ վերստ ճանապարհ և օրական գնում էր 12 ժամ, իսկ երկրորդը մի ժամում անցնում էր $12\frac{2}{5}$ վերստ և օրական գնում էր 10 ժամ: Այդ քաղաքների հեռաւորութիւնը միմեանցից 777 վերստ է: Ո՞րքան ժամանակից յետոյ և Բ. քաղաքից ինչ հեռաւորութեան վրայ սուրհանդակները միմեանց կըհանդիպեն:

550. Երկաթուղու երկու կայարաններից, որոնք միմեանցից $17\frac{1}{3}$ վերստ հեռու են դտնում, միաժամանակ դուրս եկան երկու գնացք և գնում են մի ուղղութեամբ: Յետևի գնացքը իւրաքանչիւր $\frac{3}{4}$ ժամում $19\frac{1}{8}$ վերստ ճանապարհ անցնելով, հասաւ առաջինին $2\frac{2}{3}$ ժամից յետոյ: Առաջին գնացքը մի ժամում սրքան ճանապարհ էր անցնում:

551. Աւազներ ունի երեք խողովակ: Առաջին խողովակով աւազանը լցում է 10 ժամում, երկրորդ խողովակով 15 ժ., իսկ երրորդով 3 ժ.: Քանի ժամում կըլցուի աւազանը, եթէ բոլոր խողովակները միասին բանանք:

551. Աւազանը ունի երեք խողովակ: Առաջին խողովակով $\frac{3}{4}$ ժամում լցում է աւազանի $\frac{5}{8}$ մասը, երկրորդ խողովակով $\frac{2}{3}$ ժամում լցում է աւազանի $\frac{1}{9}$ մասը, իսկ երրորդ խողովակով $\frac{4}{5}$ ժամում դատարկում է լիքը աւազանի $\frac{2}{3}$ մասը: Ո՞րքան ժամանակում աւազանը կըլցուի, եթէ բոլոր խողովակները միաժամանակ բանանք:

552. Երկու բանուոր միասին բանելով մի գործ վերջացրին 10 օրում: Առաջին բանուորը այդ գործը կարող է վերջացնել 15 օրում: Քանի օրում նոյն գործը կըվերջացնի երկրորդ բանուորը:

552. Երեք մշակ միասին բանելով 4 օրում մի փոս փորեցին: Առաջին մշակը միայնակ նոյն գործը կարող է վերջացնել 12 օրում, իսկ երկրորդը 10 օրում: Քանի օրում կարող է վերջացնել նոյն գործը երրորդ մշակը միայնակ:

553. Աւազանը լցում է երեք խողովակով: Առաջին խողո-

վակով նա լցում է $5\frac{1}{3}$ ժամում, երկրորդ խողովակով $7\frac{1}{2}$ ժ., իսկ երրորդ խողովակով $2\frac{34}{103}$ ժամում: Եթէ բոլոր խողովակները 15 րոպէ բաց թողնենք, աւազանի մէջ ներս կը թափուի 30 տակառ ջուր: Աւազանի մէջ սրքան տակառ ջուր է մտնում:

553. Աւազանը մէկ խողովակով լցում է $4\frac{1}{2}$ ժամում, երկրորդ խողովակով $3\frac{3}{4}$ ժամում, իսկ երրորդ խողովակով լիքը աւազանը դատարկում է $5\frac{2}{5}$ ժամում: Եթէ բոլոր խողովակները 3 ժամ բաց թողնենք, աւազանը լցնելու համար կը հարկաւորուի դարձեալ 12 տակառ ջուր: Աւազանի մէջ սրքան տակառ ջուր է մտնում:

554. Ա. քաղաքից առաւօտեան ժամը 10-ին ուղևորուեց դէպի Բ. քաղաքը երկաթուղու մի գնացք, որը մի ժամում անցնում էր $22\frac{31}{32}$ վերստ: Նոյն տեղից առաւօտեան ժամը 12-ին նրա յետևից ուղևորուեց մի ուրիշ գնացք, որը մի ժամում անցնում էր $30\frac{5}{8}$ վերստ: Երկրորդ գնացքը երբ և ինչ հեռավորութեան վրայ կը հասնի առաջինին:

554. Աւազանը լցնելու համար առաջ բացին մի խողովակ, որից իւրաքանչիւր $\frac{1}{6}$ ժամում աւազանի մէջ ներս էր թափւում $16\frac{2}{3}$ վեգրո ջուր: 14 րոպէից յետոյ բացին երկրորդ խողովակը, որից իւրաքանչիւր $\frac{3}{4}$ ժամում ներս էր թափւում $112\frac{1}{2}$ վ. ջուր: Ո՞րքան ժամանակից յետոյ երկրորդ և առաջին խողովակներից ներս թափուած ջրերի քանակութիւնը հաստատ կը լինի:

555. Տունը ներկելու համար վարձեցին մի ներկարար, որը կարող էր ամբողջ գործը աւարտել 20 օրում: Զորս օր բանելուց յետոյ վարձեցին երկրորդ ներկարարը, որը միայնակ նոյն գործը կարող էր աւարտել 24 օրում: Երկրորդ ներկարարը $6\frac{1}{2}$ օր բանելուց յետոյ վարձեցին մի երրորդ ներկարար. երրորդ ներկարարը $1\frac{1}{2}$ օր բանելուց յետոյ, երեք ներկարարը միասին վերջացրին ամբողջ գործը: Ո՞րքան քառակուսի տեղ ներկեցին, եթէ երրորդ ներկարարը ներկեց 180 ք. արշին:

555. Աւազանը ունի երեք խողովակ: Առաջին խողովակով աւազանը լցում 40 րոպէում, իսկ երկրորդ խողովակով 50 րոպէում: Առաջ բացին առաջին խողովակը. 4 րոպէից յետոյ

բացին երկրորդը. երկրորդ խողովակը բացուելուց $10\frac{1}{2}$ րոպէ յետոյ բացին երրորդը: Առաջին խողովակը 16 րոպէ բանալուց յետոյ աւազանը լցուեց: Ո՞րքան ժամանակում կը լցուի միայն երրորդ խողովակով ամբողջ աւազանը:

556. Կալուածատէրը մի ջրհոր փորելու համար դիմեց երեք խումբ բանուորների: Առաջին խումբը ջրհորը կարող էր փորել 40 օրում, երկրորդ խումբը 36 օրում, իսկ երրորդ խումբը 30 օրում: Կալուածատէրը ձեռնտու համարեց վարձել առաջին խմբի բանուորների $\frac{2}{3}$ մասը, երկրորդ խմբի բանուորների $\frac{3}{4}$ մասը և երրորդ խմբի բանուորների $\frac{3}{8}$ մասը: Ո՞րքան օրում կը վերջացնեն ջրհորը վարձուած բանուորները:

556. Զորս խմբի մէջ դանազան թուով բանուորներ կան: Առաջին խումբը միայնակ մի գործ կարող է կատարել 25 օրում, երկրորդը՝ 18 օրում, երրորդը՝ 30 օրում, իսկ չորրորդը՝ 26 օր 16 ժամում: Մի գործ կատարելու համար վարձեցին առաջին խմբի բանուորները $\frac{1}{2}$ -ը, երկրորդ խմբի $\frac{3}{5}$ մասը, երրորդ խմբի $\frac{5}{6}$ մասը և չորրորդ խմբի $\frac{3}{5}$ մասը: Վարձուած բանուորները սրքան օրում կաւարտեն գործը:

557. Աւազանը լցում է 3 խողովակով: Եթէ բանանք առաջին և երկրորդ խողովակները, աւազանը կը լցուի 12 ժամում. եթէ բանանք առաջինը և երրորդը, կը լցուի 15 ժամում, իսկ եթէ բանանք երկրորդ և երրորդ խողովակները, աւազանը կը լցուի 20 ժամում: Ո՞րքան ժամանակում կը լցուի աւազանը, եթէ միաժամանակ բոլոր խողովակները բանանք:

557. Վարձել են երեք բանուոր: Առաջին և երկրորդ բանուորները միասին կարող են գործը վերջացնել 8 օրում, երկրորդ և երրորդ բանուորները՝ 10 օրում, իսկ երրորդ և առաջին բանուորները՝ 6 օրում: Քանի օրում այդ գործը կաւարտեն երեքը միասին և ամեն մէկը առանձին-առանձին:

558. Մի մարդ առաջին անգամ ծախսեց իւր ունեցած փողից 40 ր., երկրորդ անգամ՝ մնացածի $\frac{2}{7}$ մասը, երրորդ անգամ նոր մնացորդի $\frac{11}{15}$ մասը և վերջը նրա մօտ մնաց դարձեալ 40 ր.: Նա սրքան փող ունէր:

558. Ճանապարհորդն առաջին օրն անցաւ 100 վերստ, եր-

կրորդ օրը մնացած ճանապարհի $\frac{3}{4}$ մասը, իսկ երրորդ օրը նոր մնացորդի $\frac{7}{13}$ մասը և մնաց դարձեալ անցնելու 90 վերստ: Ո՞րքան է ամբողջ ճանապարհը:

559. Վաճառականը մէկի վրայ ծախեց իւր ունեցած մի կտոր մահուզի $\frac{2}{5}$ մասը և դարձեալ 1 արշ., միւսի վրայ ծախեց մնացածի $\frac{3}{7}$ մասը և դարձեալ 5 արշ., որից լիտոյ նրա մօտ մնաց 15 արշ.: Ամեն մէկը ո՞րքան մահուզի դնեց:

559. Մանրավաճառը մէկի վրա ծախեց իւր ունեցած կիտրոնների $\frac{3}{8}$ մասը և դարձեալ 5 կիտրոն, միւսի վրայ ծախեց մնացածի $\frac{2}{7}$ մասը և դարձեալ 2 կիտրոն, երրորդի վրայ նոր մնացորդի $\frac{5}{6}$ մասը և վերջին 8 կիտրոնը: Նա ո՞րքան կիտրոն ունէր:

560. Ճանապարհորդն առաջին օրն անցաւ բոլոր ճանապարհի $\frac{2}{5}$ մասը և դարձեալ 10 վերստ, երկրորդ օրն անցաւ մնացած ճանապարհի $\frac{1}{4}$ մասը և դարձեալ 5 վերստ, երրորդ օրը՝ նոր մնացորդի $\frac{5}{29}$ մասը և դարձեալ 31 վերստ, վերջապէս չորրորդ օրը նա անցաւ մնացած 89 վերստը: Նա ընդամենը ո՞րքան ճանապարհ անցաւ:

560. Չկնորսը մէկի վրայ ծախեց իւր որսած ձկների $\frac{3}{8}$ մասը և մնացածի $\frac{1}{15}$ մասը, երկրորդի վրայ ծախեց մնացորդի $\frac{2}{7}$ մասը և նոր մնացորդի $\frac{1}{5}$ մասը, երրորդի վրայ՝ երկրորդ անգամ ծախելուց լիտոյ մնացած ձկների $\frac{7}{16}$ մասը և նոր մնացորդի $\frac{5}{9}$ մասը, իսկ չորրորդի վրայ՝ ծախեց մնացած 20 ձուկը: Նա ընդամենը ո՞րքան ձուկն էր բռնել:

561. Գտնել ուղղանկիւն քառանկիւնի ձև ունեցող դաշտի մակարդակը, որի երկարութիւնն է 42 ս. Ն արշ.: իսկ լայնութիւնը կազմում է երկարութեան $\frac{15}{16}$ մասը:

561. Գտնել սենեակի պատերի, յատակի և առաստաղի մակերևոյթը, եթէ յայտնի է, որ սենեակի երկարութիւնն է 2 ս. $1\frac{1}{2}$ արշ., լայնութիւնը հաւասար է երկարութեան $\frac{3}{5}$ մասին, իսկ բարձրութիւնը լայնութիւնից $1\frac{1}{5}$ անգամ աւելի է:

562. Ուղղանկիւն քառանկիւնի ձև ունեցող յատակի երկարութիւնն է $4\frac{2}{3}$ սափ., իսկ լայնութիւնն է 3 սափ. 1 արշ. $12\frac{3}{5}$ վերշ.: Ո՞րքան տախտակ կը հարկաւորուի այդ յատակը

ծածկելու համար, եթէ ամեն մէկ տախտակի երկարութիւնն է $2\frac{1}{10}$ սափ., իսկ լայնութիւնն է $5\frac{1}{3}$ վերշ.:

562. Սենեակի երկարութիւնն է $2\frac{13}{16}$ սափ., լայնութիւնը $5\frac{9}{16}$ արշ., իսկ բարձրութիւնը $3\frac{7}{8}$ արշ.: Այդ սենեակն ունի 2 դուռ և 2 պատուհան: Գուան բարձրութիւնն է 1 ս. $\frac{3}{8}$ արշ., իսկ լայնութիւնը $\frac{2}{3}$ սափ., պատուհանի բարձրութիւնն է $2\frac{3}{4}$ արշ., իսկ լայնութիւնը $1\frac{7}{16}$ արշ.: Կ՞րքան կտոր պատառ կերթայ այդ սենեակը պատտառելու համար, եթէ մէկ կտոր պատառի երկարութիւնն է 12 արշ., իսկ լայնութիւնը $\frac{3}{4}$ արշին:

563. Ո՞րքան աղիւս է պարունակում 1 խոր. սափ. պատի մէջ, եթէ ամեն մէկ աղիւսի երկարութիւնը $10\frac{1}{2}$ մատնաչափ է, լայնութիւնը $5\frac{1}{4}$ մատն., իսկ հաստութիւնը $1\frac{1}{2}$ վերշ.:

563. Մետաղէ ձողը, որի երկարութիւնն է 1 արշ., լայնութիւնը 2 վերշ., իսկ հաստութիւնը $1\frac{1}{2}$ վերշ., կշռում է $12\frac{3}{7}$ գրվ.: Ո՞րքան կը կշռուի նոյն մետաղից պատրաստած մի այլ ձող, որի երկարութիւնը 2 արշ. է, լայնութիւնը $\frac{3}{4}$ վերշ., իսկ հաստութիւնը 1 վերշ.:

564. Ո՞րքան կ'նստի ջրանցքի փորելը, որի երկարութիւնը 2 ս. $2\frac{3}{4}$ արշ. է, լայնութիւնը $2\frac{5}{6}$ արշ., իսկ խորութիւնը $2\frac{6}{17}$ արշ., եթէ 1 խոր. սափ. փորելու համար պահանջում են 2 ր. 70 կ.:

564. 2 բանուոր 18 օրում մի փոս փորեցին, որի երկարութիւնը $7\frac{1}{5}$ սափ. էր, լայնութիւնը $4\frac{2}{3}$ սափ., իսկ խորութիւնը 2 սափ. $1\frac{1}{2}$ արշ.: Իւրաքանչիւր բանուոր օրական ո՞րքան վարձ էր ստանում, եթէ 1 խ. արշ. փոս փորելու համար վրձարում էին 5 կ.:

565. Փարիզում գնել են $12\frac{4}{5}$ կիլոգրամ մ թէյ և վճարել են 216 ֆրանկ: Ո՞րքան արժէ ուսաց փողով 1 գրվանքան, եթէ կիլոգրամը = 2 գրվ. 42 մսխ. և 3 ֆրանկը կուրսի համատ կազմում է 1 ր. 4 կ.:

565. Լիօնում մի տուն շինելու համար գնեցին գետին, որի երկարութիւնը $32\frac{2}{5}$ մետր էր, իսկ լայնութիւնը $22\frac{14}{25}$

մետր և իւրաքանչիւր արին վճարեցին 2500 ֆրանկ: Այդ գետինը ռուսաց փողով ինչ արժէ, եթէ արը=100 ք. մետրին, իսկ 4 ֆրանկը կուրսի համեմատ կազմում է $1\frac{2}{5}$ ր.:

566. Անյայտ թուի $\frac{6}{7}$ մասի $\frac{7}{13}$ մասը հաւասար է 70-ին: Գտնել այդ թիւը:

566. Անյայտ թուի $\frac{7}{3}$ մասի $\frac{3}{28}$ մասը հաւասար է $5\frac{1}{3}$ -ին: Գտնել այդ թիւը:

567. Եթէ անյայտ թուի $\frac{3}{7}$ մասին աւելացնենք $11\frac{1}{2}$, կը ստանանք $14\frac{1}{3}$: Գտնել այդ թիւը:

567. Եթէ անյայտ թուի $\frac{3}{5}$ մասից հանենք $3\frac{1}{4}$, կստանանք $9\frac{7}{20}$: Գտնել անյայտ թիւը:

568. Եթէ անյայտ թուի $\frac{2}{25}$ մասը բազմապատկենք $7\frac{2}{5}$ վրայ, կստանանք $2\frac{1}{6}$: Գտնել այդ թիւը:

568. Եթէ անյայտ թուի $\frac{3}{8}$ մասը բաժանենք $\frac{5}{21}$ վրայ, կստանանք 63: Գտնել այդ թիւը:

569. Եթէ անյայտ թուի $\frac{1}{3}$ մասին աւելացնենք $6\frac{1}{4}$, կը ստանանք նոյն թուի $\frac{3}{4}$ մասը: Գտնել այդ թիւը:

569. Եթէ անյայտ թուի $\frac{2}{5}$ մասից հանենք $\frac{1}{8}$, կստանանք նոյն թուի $\frac{19}{60}$ մասը: Գտնել այդ թիւը:

570. Եթէ անյայտ թուի $\frac{5}{7}$ մասին աւելացնենք 8 և ստացած գումարը բազմապատկենք $\frac{3}{5}$ վրայ, կստանանք $9\frac{18}{25}$: Գտնել անյայտ թիւը:

570. Եթէ անյայտ թուի $\frac{3}{4}$ մասից հանենք $\frac{1}{8}$ և ստացած մնացորդը բաժանենք $2\frac{1}{2}$ վրայ, կստանանք $\frac{1}{4}$: Գտնել անյայտ թիւը:

III.

ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԿՆԵՐ

§ 16. Տասնորդական կոտորակների ծագումը եւ ճեւակերպումը: Մեծացնելը եւ փոքրացնելը 10, 100, 1000 եւ այլն անգամ: Մի ընդհանուր յայտարարի բերելը եւ կըրծատելը:

571. Ստորակէտի աջ կողմը առաջին տեղը ամբողջ միութեան ո՞ր մասերն են գտնուում, երկրորդ տեղը ո՞ր մասերը, հինգերորդ, երրորդ, վեցերորդ, չորրորդ և եօթերորդ տեղը ո՞ր մասերը:

571. Ստորակէտի աջ կողմը ո՞րերորդ տեղն են բռնում տասերորդական, հազարերորդական, միլլիոներորդական, հարիւրերորդական, տասհազարերորդական, տասըմիլլիոներորդական և հարիւրհազարերորդական մասերը:

572. Տասնորդական կոտորակի ամենավերջին թուանշանը ո՞րերորդ մասերն է արտայայտում, եթէ ստորակէտից յետոյ գտնուում է 5, 3, 1, 6, 4, 7, 2, 8 թուանշան:

572. Տասնորդական կոտորակը ո՞րքան թուանշանից կըլինի բաղկացած, եթէ ամենավերջին թուանշանը արտայայտում է հարիւրերորդական, միլլիոներորդական, տասհազարերորդական, հարիւրմիլլիոներորդական, հարիւրհազարերորդական, տասըմիլլիոներորդական և տասերորդական մասեր:

573. Կարգալ հետևեալ կոտորակները՝ 3,7; 40,8; 0,9; 5,13; 0,97; 15,01; 0,05; 5,314; 0,011; 0,101; 7,4908; 1,1001; 55,5555; 0,0804:

573. Կարգալ հետևեալ կոտորակները՝ 35,0071; 44,40404;

6,00807; 11,11111; 0,570008; 9,00009; 2,030303;
0,000715; 0,005001; 103,10031; 0,0000097; 1,1410253;
0,0000001; 11,30300514:

574. Գրել առանց յայտարարների Հետևեալ կոտորակները՝
 $\frac{7}{10}$, $\frac{81}{100}$, $\frac{15}{100}$, $1\frac{9}{10}$, $\frac{67}{100}$, $11\frac{125}{1000}$, $5\frac{21}{1000}$, $8\frac{4528}{10000}$,
 $21\frac{309}{10000}$, $18\frac{11111}{100000}$:

574. Գրել առանց յայտարարների Հետևեալ կոտորակները՝
 $\frac{11}{10}$, $\frac{305}{100}$, $\frac{1001}{1000}$, $\frac{50006}{10000}$, $\frac{57041}{1000000}$, $\frac{3^9}{100000}$, $\frac{18}{1000000}$,
 $24\frac{7004}{1000000}$, $\frac{100}{100000}$, $50\frac{700}{10000000}$:

575. Հետևեալ կոտորակներից ո՞րն է ամենամեծը և ո՞րն ամենափոքրը՝ ա) 0,4; 0,41; ը) 1,317; 1,31699; գ) 0,008; 0,0103; 0,011; զ) 0,83; 0,7604; 0,596; 0,6:

575. Հետևեալ կոտորակներից ո՞րն է ամենամեծը և ո՞րն ամենափոքրը՝ ա) 0,9; 0,899; ը) 0,0037; 0,003598; 0,003; գ) 0,18; 0,2704; 0,20091; 0,17085; զ) 0,014; 0,013378; 0,0133169; 0,01338; 0,0134:

576. Ի՞նչ կրկինի տասնորդական կոտորակը, եթէ նրա ստորակէտը տեղափոխենք դէպի աջ և դնենք 1, 2, 3, 4, 5, 6, 7 թուանշանից յետոյ:

576. Ի՞նչ կրկինն Հետևեալ կոտորակները, եթէ նրանց ստորակէտները ջնջենք՝ 0,1; 5,08; 2,129; 4,009; 0,0634; 0,00001; 0,000123:

577. Հետևեալ կոտորակները մեծացնել 10 անգամ՝ 3,4; 0,8; 11,95; 0,01; 0,0051; 27,0066; 327,1; 0,0001; 1579,2; 83,05; 1000,01:

577. Հետևեալ կոտորակները մեծացնել 100 անգամ՝ 2,14; 0,03; 17,1; 0,1; 30,1; 0,009; 0,016; 10,101; 0,00158; 18,00405; 0,0199:

578. Հետևեալ կոտորակները մեծացնել 1000 անգամ՝ 3,1417; 0,1508; 8,0037; 4,009; 0,001; 0,0305; 0,72; 3,5; 0,1; 5,00047; 0,00009:

578. Հետևեալ կոտորակները մեծացնել 10000 անգամ՝ 0,1057; 7,0015; 0,37; 0,6; 0,025; 11,001; 0,012345; 7,000003; 100,001; 312,04; 0,00093:

579. Հետևեալ կոտորակները մեծացնել 100000 անգամ՝ 2,014517; 0,00518; 4,0780903; 0,06:

579. Հետևեալ կոտորակները մեծացնել 1000000 անգամ՝ 0,5024712; 5,034718; 0,0117; 0,008:

580. Ի՞նչ կրկինի կոտորակը, եթէ նրա ստորակէտը տեղափոխենք ձախ 1, 2, 3, 4 թուանշանից յետոյ:

580. Ի՞նչ կրկինի կոտորակը, եթէ նրա ստորակէտը տեղափոխենք ձախ 5, 6, 7, 8 թուանշանից յետոյ:

581. Հետևեալ կոտորակները փոքրացնել 10 անգամ՝ 13,6; 15,05; 130,21; 250,03; 0,9; 0,147; 0,008; 0,0055; 0,002345:

581. Հետևեալ կոտորակները փոքրացնել 100 անգամ՝ 125,36; 4000,7; 200,06; 15,2; 4,7; 5,067; 0,1; 0,007; 0,09:

582. Հետևեալ կոտորակները փոքրացնել 1000 անգամ՝ 1237,4; 270,1; 41,6; 2,31; 0,85; 0,09; 0,0303; 0,0004:

582. Հետևեալ կոտորակները փոքրացնել 10000 անգամ՝ 239,1; 46,09; 7,05; 1,101; 0,3:

583. Հետևեալ կոտորակները փոքրացնել 100000 անգամ՝ 23500,4; 490,3; 25,08; 3,6; 0,1;

583. Հետևեալ կոտորակները փոքրացնել 1000000 անգամ՝ 1000000,2; 340,9; 65,1; 4,07; 0,3:

584. Մեծացնել՝ 23-ը 10 անգամ, 4-ը 1000 անգամ, 61-ը 10000 անգամ:

584. Փոքրացնել՝ 325-ը 10 անգամ, 35-ը 100 անգամ, 1-ը 1000 անգամ, 72-ը 10000 անգամ:

585. Քանի անգամ 12-ը մեծ է 0,012-ից, 22,006-ը փոքր է 2200,6-ից:

585. Քանի անգամ 2,45-ը փոքր է 2450-ից, 660-ը մեծ է 0,066-ից:

586. Ի՞նչ կրկինի կոտորակը, եթէ ա) ստորակէտը տեղափոխենք աջ 5 թուանշանից յետոյ, իսկ յետոյ ձախ 2 թուանշանից յետոյ, ը) ստորակէտը տեղափոխենք ձախ 4 թուանշանից յետոյ, իսկ յետոյ աջ 2 թուանշանից յետոյ:

586. Ի՞նչ կըլինի կոտորակը, եթէ ա) ստորակէտը տեղափոխենք աջ 6 թուանշանից յետոյ, իսկ յետոյ ձախ 4 թուանշանից յետոյ, ը) ստորակէտը տեղափոխենք ձախ 7 թուանշանից յետոյ, իսկ յետոյ աջ 3 թուանշանից յետոյ:

587. Արտայայտել բարդ անուանական թուերով՝ 20,06 ըուրլին; 11,025 ը.: 43,475 ը.: 60,037 ը.:

587. Արտայայտել ըուրլու տասնորդական մասերով՝ 4028 կուպէկը, 21 կ.: 2 կ.: 0,8 կ.: 4 ը. 37 կ.: 2 ը. 13,2 կ.: 1 ը. 5 կ.: 3 ը. 10,05 կ.:

588. Հետեւեալ կոտորակները մի ընդհանուր յայտարարի բերել՝ ա) 0,4 և 0,123, ը) 0,16; 1,3 և 0,742. գ) 1,5; 2,7006; 3,08 և 4,000081:

588. Հետեւեալ կոտորակները մի ընդհանուր յայտարարի բերել՝ ա) 0,0081; 1,59 և 0,000865. ը) 0,1; 7,02; 0,0003 և 0,1111067. գ) 0,00003; 5,12; 0,4; 0,07; 0,073 և 0,80635:

589. Կրճատել հետեւեալ կոտորակները՝ 0,100; 7,0610; 8,0400; 0,0080:

589. Կրճատել հետեւեալ կոտորակները՝ 3,20400; 0,005200; 7,5300; 0,080000:

§ 17. Տասնորդական կոտորակների գումարումը եւ հանումը:

ա) Գումարումը:

- 590. 8,7 + 4,2
- 591. 3,57 + 0,33
- 592. 0,56 + 0,7 + 0,908
- 593. 0,527 + 0,0064 + 0,2975
- 593. 1,2 + 0,7581 + 9,342518
- 594. 1,416 + 2,3 + 3,28 + 1,004
- 594. 0,01 + 2,007 + 0,9 + 1,16057
- 590. 7,8 + 2,3
- 591. 10,49 + 5,51
- 592. 5,92 + 6,751 + 0,789

595. 5 + 1,806 + 3,0096 + 0,08964

595. 0,0000006 + 5,98 + 7,10987 + 1

596. 1,7 + 5,892 + 3,4785 + 6,78 + 0,0009

596. 0,3 + 0,0014 + 0,25 + 0,408 + 0,0406

597. Բանուորները 4 օր բանեցին: Առաջին օրը ստացան 10,45 ըուրլի, երկրորդ օրը 9,3 ը., երրորդ օրը 12,75 ը., իսկ չորրորդ օրը 11,1 ը.: Ընդամենը սրբքան փող ստացան:

597. Աւաղանի մէջ լցրին 247,09 վեղրօ ջուր, յետոյ 101,9 վ. և վերջապէս 319,004 վ.: Ո՞րքան ջուր է տանում աւաղանը, եթէ ամբողջը լցնելու համար հարկաւոր է դարձեալ 20,006 վ.:

598. Երկաթուղով ուղարկել են 4 հակ ապրանք: Առաջինը կշռում է 35,6 փ., երկրորդը 2,5 փ. աւելի, երրորդը երկրորդից 11,97 փ. աւելի, իսկ չորրորդը երրորդից 5,015 փ. աւելի: Ո՞րքան է բոլոր ապրանքը:

598. Կալուածատէրն ունի 4 կալուածք: Առաջինը բռնում է 109,31 դեսետին տեղ, երկրորդը 6,09 դես. աւելի, երրորդը երկրորդից 5,8 դես. աւելի, իսկ չորրորդը բռնում է այնքան տեղ, որքան առաջին և երրորդ կալուածքները միասին: Ո՞րքան դեսետին է բոլոր կալուածքը:

599. Չլի միջի ջուրը կշռում է 4,032 գրվ., իսկ դատարկ շշի ծանրութիւնը հաւասար է ջրի քաշի 0,1-ին: Ո՞րքան է կշռում ջրով լի շշը:

599. Մանրավաճառը գնեց 100 չետիկերտ հաճար, չետիկերտը 3,2575 ըուրլիով: Ո՞րքանով պէտք է ծախի չետիկերտը, որ բոլորի մէջ աշխատի 64,25 ը.:

600. Գերձակը վաճառականից գնեց 10 մետր մի տեսակ մահուդ, մետրը 13,25 ֆրանկով և 10 մետր էլ այլ տեսակ մահուդ, մետրը 12,625 ֆր.: Ո՞րքան փող վճարեց բոլորի համար:

600. Վաճառականը ծախեց 1000 փութ ապրանք, փութը 6,05 ըուրլիով, դարձեալ 100 փ. ապրանք, փութը 6,125 ըուրլիով և 10 փ., փութը 7,25 ը.: Նա սրբքան փող ստացաւ:

601. 20,209 գրվ. պղնձից, 41,39 գրվ. անագից և 38,401 գրվ.

արձիճից մի Հալուածք են կաղմել: Հալուածքի ամեն մէկ գրվանքայի մէջ ամեն մի տեսակ մետաղից սրքան է պարունակուամ:

601. Արծաթագործը գնեց արծաթէ դանազան Հին իրեր՝ գդալներ, որոնք կշռում էին 1,375 գրվ. և արժէին 34,349 ռ., սկուտղեր, որոնք կշռում էին 4,1 գրվ. և արժէին 93,0318 ռ. և սեղանի ալ իրեր, որոնք կշռում էին 4,525 գրվ. և արժէին 104,4192 ռ.: Ի՞նչ արժէր արծաթի մէկ գրվանքան:

բ) Հանումը:

- | | |
|-----------------------|-----------------------|
| 602. 6,7 — 3,4 | 602. 0,873 — 0,582 |
| 603. 3,1 — 0,4 | 603. 7,2 — 3,45 |
| 604. 62,7 — 3,065 | 604. 13,285 — 4,9 |
| 605. 3,0082 — 2,99956 | 605. 69,2 — 50,35784 |
| 606. 2 — 0,0007 | 606. 4 — 3,9999 |
| 607. 1 — 0,9118 | 607. 1 — 0,0099 |
| 608. 2 — 1,068251 | 608. 100 — 99,0005489 |

609. Յուլեան տօմարով տարին ունի 365,25 օր, իսկ Գրիգորեան տօմարով 365,242217 օր: Արոշել դրանց տարբերութիւնը:

609. Ջրով լի ամանը կշռում է 43,5 գրվ., իսկ դատարկ ամանը՝ 3,025 գրվ.: Ո՞րքան է կշռում ամանի միջի ջուրը:

610. Գնել են 6,24 փ. ալիւր: Առաջին շաբաթը ծախսեցին 3,06 փ., իսկ երկրորդ շաբաթը 0,38 փ. պակաս: Ո՞րքան ալիւր մնաց:

610. 46,8 ոտնաչափ երկարութիւն ունեցող երկաթաթելից առաջին անգամ կտրեցին 12,38 ոտնաչափ, իսկ երկրորդ անգամ 3,435 ոտն. պակաս: Ո՞րքան մնաց:

611. Չորս բանուոր մի ջրանցք փորեցին: Առաջինը փորեց ջրանցքի 0,28 մասը, երկրորդը առաջինից 0,03 մասով աւելի փորեց, իսկ երրորդը երկրորդից 0,02 մասով պակաս: Ո՞ր մասը փորեց չորրորդ բանուորը:

611. Չորս ամանի մէջ 6,194 փութ իւղ կայ: Առաջինը

մէջ կայ 1,09 փ., երկրորդի մէջ առաջինից 1,015 փ. աւելի, իսկ երրորդի մէջ երկրորդից 0,016 փ. պակաս: Ո՞րքան իւղ կայ չորրորդ ամանի մէջ:

612. Աւազանից 1254,64 վեդրօ ջուրը դուրս է թափուում երկու խողովակով: Առաջին խողովակը բացին 10 րոպէ, յետոյ փակելով առաջինը, բացին երկրորդը, որից մնացած ջուրը դուրս թափուեց 1 Ժ. 40 րոպէում: Երկրորդ խողովակով ամեն մէկ րոպէում սրքան ջուր էր դուրս թափուում, եթէ առաջին խողովակով մէկ րոպէում դուրս էր թափուում 24,78 վեդրօ:

612. Ոսկերիչն ունէր մի կտոր ոսկի, որը կշռում էր 63,5 մսխալ: Գրանից պատրաստեց 10 Հատ մատանի, ամեն մէկը 1,25 մսխ. ծանրութեամբ և 10 Հատ էլ միատեսակ մանեակներ: Ո՞րքան էր կշռում ամեն մէկ մանեակը:

613. Վաճառականը 3 գլուխ շաքար ծախեց 3,76 րուբլիով, 3,45 ռ. և 4,09 ռ.: Ստացած օգուտը Հաւասար էր բոլոր գումարի 0,1 մասին: Ո՞րքանով էր գնել շաքարը:

613. Գնել են 100 կիլօգրամ մ պարանք, կիլօգրամը 4,085 ֆրանկով, իսկ բոլորը ծախել են 503 ֆր. 27,5 սանտիմով: Բոլորի մէջ սրքան օգուտ են ստացել: (Ֆրանկը=100 սանտիմին):

614. Ի՞նչ կըլինի գումարը, եթէ մէկ գումարելուն աւելացնենք 2,7861, իսկ միւս գումարելուց Հանենք 3,004:

614. Ի՞նչ կըլինի տարբերութիւնը, եթէ նուազելուն աւելացնենք 3, իսկ Հանելուն 1,7809:

615. Գտնել մի այնպիսի թիւ, որը եթէ մեծացնենք 1000 անգամ և ստացածին աւելացնենք 1,087, ստանանք 86,007:

615. Եթէ տասնապատիկ անյայտ թուին աւելացնենք 3,08, կստանանք մի. թիւ, որը 1000 անգամ մեծ կըլինի 1,09-ի և 0,97-ի տարբերութիւնից: Գտնել անյայտ թիւը:

Հետևեալ օրինակների մէջ ցոյց տուած գործողութիւնները կատարել.

- 616. (23,73 + 14,27) — (8,1735 + 12,35)
- 616. (6,45 — 0,077) + (19,2 — 6,3571)

- 617. $(38,2 - 5,0048) - (14 - 2,34)$
- 617. $(148 - 0,0909) + (41,3 - 12,0791)$
- 618. $(35,7 + 14,2565 + 8,25) - (4,3745 + 7,29)$
- 618. $(0,13 + 6,735 + 48) + (25,1 - 3,0824)$
- 619. $(10,5 + 0,3215 - 2,79) - (2,6 + 0,75)$
- 619. $(5,07 - 4,0356) + (0,7 + 3,254 - 2,3)$
- 620. $5,1 - [7,0199 - (4,901 + 1,4783)]$
- 620. $35,0021 - [43,001 - (11,09 - 1,0905)]$
- 621. $10,4 - \{17,33 - [13,005 - (6,1 - 4,907)]\}$
- 621. $40,11 - \{55 - [17,09 + (9,234 - 0,58974)]\}$
- 622. $[(8,36 + 2,8) - (8,36 - 2,8)] \cdot 10$
- 622. $[(3,84 - 0,718) - (3,14 - 0,365)] : 10$

§ 18. Տասնորդական կոտորակների բազմապատկումը:

ա) Կոտորակը բազմապատկել ամբողջ թվի վրայ:

- | | |
|---------------------|----------------------|
| 623. 3,4 · 2 | 623. 8,1 · 7 |
| 624. 0,45 · 3 | 624. 0,81 · 5 |
| 625. 6,18 · 8 | 625. 13,09 · 9 |
| 626. 2,007 · 15 | 626. 0,048 · 23 |
| 627. 0,6 · 5 | 627. 0,05 · 6 |
| 628. 0,125 · 8 | 628. 1,25 · 48 |
| 629. 0,035 · 12 | 629. 0,00256 · 25 |
| 630. 0,095 · 10 | 630. 1,44 · 100 |
| 631. 0,2104 · 1000 | 631. 5,019 · 10000 |
| 632. 1,45 · 40 | 632. 8,25 · 60 |
| 633. 0,06725 · 400 | 633. 0,0125 · 8000 |
| 634. 17,54 · 1350 | 634. 43,725 · 640 |
| 635. 0,00024 · 1225 | 635. 5,634625 · 1024 |

բ) Ամբողջ թիւը բազմապատկել կոտորակի վրայ:

- | | |
|---------------|-----------------|
| 636. 8 · 07 | 636. 6 · 0,5 |
| 637. 5 · 0,07 | 637. 6 · 0,0015 |

- | | |
|--------------------|-------------------|
| 638. 30 · 0,9 | 638. 25 · 4,04 |
| 639. 16 · 0,025 | 639. 54 · 0,0005 |
| 640. 200 · 0,0015 | 640. 6000 · 2,525 |
| 641. 28 · 12,054 | 641. 99 · 0,0081 |
| 642. 149 · 0,04932 | 642. 480 · 1,5625 |

գ) Կոտորակը բազմապատկել կոտորակի վրայ:

- | | |
|---|-------------------------------|
| 643. 0,3 · 0,2 | 643. 0,5 · 0,4 |
| 644. 0,5 · 0,16 | 644. 0,83 · 0,07 |
| 645. 0,06 · 6,008 | 645. 0,0625 · 2,56 |
| 646. 0,7 · 0,7 | 646. 11,88 · 11,88 |
| 647. 87,24 · 0,585 | 647. 173,54 · 0,045 |
| 648. 13,00005 · 0,00005 | 648. 0,000006 · 0,0007 |
| 649. 0,5 · 0,8 · 1,25 | 649. 0,25 · 0,625 · 6,4 |
| 650. 0,48 · 1,37 · 0,58 | 650. 7,24 · 5,67 · 2,5 |
| 651. 1,2 · 1,3 · 1,4 · 1,5 | 651. 0,06 · 0,5 · 0,001 · 0,2 |
| 652. 48,36 · 0,288 · 5,12 · 625 | |
| 652. 0,008 · 0,004 · 2,00006 · 100 | |
| 653. 0,0368 վերստի մէջ քանի արշին կայ: | |
| 653. 0,085 փթի մէջ քանի մսխալ կայ: | |
| 654. 0,5 սափ. 1,125 արշինի մէջ քանի վերշոկ կայ: | |
| 654. 0,12 փ. 3,5 զրվանքի մէջ քանի մսխալ կայ: | |
| 655. 7,84 տարին արտայայտել բարդ անուանական թուերով: | |
| 655. 0,62 փութը արտայայտել բարդ անուանական թուերով: | |
| 656. 38,5 մետրի մէջ սրքան արշին կայ: (Մետրը = 1,4 արշ: | |
| 656. 21,8 զրամմի մէջ սրքան մսխալ կայ: (Գրամմը = 0,234 մսխ.): | |
| 657. 0,756 կիլոգրամմի մէջ սրքան մսխալ կայ: (Կիլոգրամմը = 2 զրվ. 42 մսխ.): | |
| 657. 14,75 դեկամետրի մէջ սրքան մատնաչափ կայ: (Մետրը = 3,2809 ոտն.): | |
| 658. 750 վերստ 4 սափ. 2,56 արշին · 45,8 | |
| 658. 17 զրվ. 6 ր. 2,175 մսխալ · 3,78 | |

659. Հողեշարժ մեքենան բանացնելու համար մի ժամում գործ են ածում 37,05 գրվ. քարածուխ: Ո՞րքան քարածուխ կերթայ 3 օրում:

659. 2,48 արշ. շրջապատ ունեցող անիւը 150 պտոյտ արաւ: Նա ո՞րքան տարածութիւն էր անցել:

660. Բանուորը մի ջրանցք կարող է փորել 8,6 օրում, եթէ օրական բանի 9,15 ժամ: Քանի օրում կը փորի նոյն ջրանցքը, եթէ օրական բանի 1 ժամ:

660. Հողեկառքը մի րոպէում 0,575 վերստ ճանապարհ անցնելով, 1,28 ժամում անցաւ երկու կայարանների միջի տարածութիւնը: Որոշել կայարանների հեռաւորութիւնը միմեանցից:

661. Փարիզում գնել են 16 կտոր մահուդ իւրաքանչիւր կտորը 30,25 մետր երկարութեամբ, մետրը 26 ֆրանկ 40 սանտիմով: Ո՞րքան են վճարել բոլոր մահուդի համար:

661. 120 արշին քաթանին վճարել են 517,5 ռ.: Ո՞րքան օգուտ կստանան, եթէ արշինը ծախեն 4,875 ռուբլիով:

662. Վաճառականը գործարանում գնեց 510,8 արշ. թաւիշ: Գրանից 319,4 արշ. նա ծախեց արշինը 6,25 ռուբլիով, իսկ մնացած թաւիշի ամեն մի արշինը ծախեց 3,4 ռուբլիով: Բոլոր ապրանքը ո՞րքան էր նստել իրեն, եթէ 639,31 ռուբլի օգուտ ստացաւ:

662. Լիօնում վաճառականը 6 արկղ ապրանք ստացաւ, ամեն մի արկղը՝ 324,05 կիլոգրամով ծանրութեամբ: Այդ ապրանքի ամեն մէկ կիլոգրամին նա վճարել էր 4,5 ֆրանկ, ճանապարհածախս վճարեց ամեն մի արկղին 3,456 ֆրանկ. իսկ ամեն մի միրիադրամին 1,8 ֆրանկ էլ մաքս վճարեց: Բոլոր ապրանքը իրեն ո՞րքան նստեց:

663. Ո՞րքան կ'կշռի մէկ խորանարդ մատնաչափ ոսկին, եթէ մէկ խորանարդ մատնաչափ ջուրը կշռում է 3,84 մըսխալ, երկաթը ջրից ծանր է 7,8 անգամ, իսկ ոսկին երկաթից ծանր է 2,457 անգամ:

663. Մէկ խորանարդ մատնաչափ ջուրը կշռում է 3,84 մսխ.: Ո՞րքան կ'կշռի 21,25 խոր. ոտնաչափ երկաթը, եթէ երկաթը ջրից 7,8 անգամ ծանր է:

664. Երկրագնդի մակերևութը 928000 քառ. մղոն է. դրա 0,734 մասը կազմում է ջուրը: Ո՞րքան քառ. մղոն տեղ է բռնում ցամաքը:

664. Ես ունէի 550 ռ.: Գրա 0,46 մասը ծախսեցի: Ո՞րքան փող մնաց:

665. Գտնել 3,8-ի 0,045 մասը:

665. Գտնել 5,005-ի 0,04 մասը:

666. Գտնել 2,0625-ի և 0,008-ի արտադրեալի 0,16 մասը:

666. Գտնել 3,1-ի և 0,075-ի տարբերութեան 0,4 մասը:

667. Ճանապարհորդն առաջին օրն անցաւ ամբողջ ճանապարհի 0,45 մասը, իսկ երկրորդ օրը՝ մնացած ճանապարհի 0,18 մասը: Ճանապարհի ո՞ր մասը մնաց անցնելու:

667. Մի շարագրութիւն, որը բաղկացած է 560 երեսից, արտագրելու համար վարձեցին 3 դրագիր: Առաջին դրագիրը արտագրեց ամբողջ շարագրութեան 0,35 մասը, երկրորդը՝ մընացածի 0,75 մասը, իսկ վերջին մնացորդը արտագրեց երրորդը: Իւրաքանչիւր դրագիր ո՞րքան արտագրեց:

668. Խանութում 3 արկղ սուրճ կայ: Առաջին արկղի մէջ կայ 2,75 փ., երկրորդի մէջ առաջինից 1,5 փ. աւելի է, իսկ երրորդ արկղի սուրճը հաւասար է առաջին և երկրորդ արկղների միջի սուրճի 0,44 մասին: Ո՞րքան արժէ բոլոր սուրճը, եթէ գրվանքան արժէ 0,6 ռ.:

668. Երեք եղբայր մի գետին զնեցին և միմեանց մէջ այնպէս բաժանեցին, որ առաջինը ստացաւ 25,6 գեսետին, երկրորդը՝ դրա 0,85 մասը, իսկ երրորդ եղբոր բաժինը առաջին և երկրորդ եղբոր բաժնից 1,125 անգամ աւելի էր: Բոլոր գետինը ո՞րքան արժէր, եթէ գեսետինին վճարել էին 20,5 ռ.:

669. Աւաղանը ունի 2 խողովակ: Առաջին խողովակով մէկ րոպէում աւաղանի մէջ ներս է թափուում 3,45 վեդրօ ջուր, իսկ երկրորդ խողովակով՝ առաջին խողովակով ներս թափուած ջրի 0,76 մասը: Եթէ երկու խողովակը միասին բանանք, աւաղանը կըլցուի 7 ժ. 15 րոպէում: Աւաղանը ո՞րքան վեդրօ ջուր է տանում:

669. Ա և Բ կայարաններից առաւօտեան 10 ժամին դուրս

եկան երկու գնացք և գնում են միմեանց հանդէպ: Առաջին գնացքը 1 ժամում անցնում է 31,625 վերստ, իսկ երկրորդը իւրաքանչիւր 5 րոպէում՝ 3,0625 վերստ: Ո՞րքան է կայարանների հեռավորութիւնը միմեանցից, եթէ գնացքները միմեանց հանդիպեցին երեկոյեան ժամի 6-ին:

670. Եթէ բաղմապատկելին մեծացնենք 4,375 անգամ, իսկ բաղմապատկիչը 5,6 անգամ, ինչ կլինի արտադրեալը:

670. Եթէ բաժանելին մեծացնենք 3,56 անգամ, իսկ բաժանարարը փոքրացնենք 7,5 անգամ, ինչ կլինի քանորդը:

671. Ի՞նչ թիւ պէտք է բաժանենք 7,65-ի վրայ, որ քանորդը ստանանք 0,008:

671. Եթէ անյայտ թիւը բաղմապատկենք 1000-ի վրայ և ստացած արտադրեալը բաժանենք 0,72-ի վրայ, կստանանք 75: Գտնել անյայտ թիւը:

Հետևեալ օրինակների մէջ ցոյց տուած գործողութիւնները կատարել:

- 672. $(3,75 + 2,25) \cdot (1,325 + 2,7)$
- 672. $(40 - 38,5) \cdot (10,28 - 0,06)$
- 673. $(0,048 \cdot 2,5) + (5,6 \cdot 0,005)$
- 673. $(8,72 \cdot 0,9) - (0,04 \cdot 1,2)$
- 674. $(5,3 - 0,254) \cdot 0,2 + (0,3 + 2,001) \cdot 4,1$
- 674. $(0,09 + 5,099) \cdot 1,8 - (0,06 - 0,058) \cdot 0,1$
- 675. $(5,1 \cdot 0,7 + 3,06 \cdot 0,5) \cdot 0,1$
- 675. $(10,05 \cdot 0,2 - 4,008 \cdot 0,1) \cdot 0,5$
- 676. $(3,2 \cdot 0,5 + 0,06 \cdot 7,5) \cdot (3,4 \cdot 25 - 0,21 \cdot 4)$
- 676. $(0,109 \cdot 3 - 1,01 \cdot 0,2) \cdot (10 \cdot 0,04 + 0,25 \cdot 1,6)$

§ 19. Տասնորդական կոտորակների բաժանումը:

ա) Կոտորակը բաժանել ամբողջ թուի վրայ:

- 677. 8,46 : 2
- 677. 10,505 : 5
- 678. 27,42 : 6
- 678. 101,52 : 47

- 679. 1,6 : 5
- 679. 4,68 : 15
- 680. 3,15 : 9
- 680. 8,073 : 15
- 681. 1,11 : 75
- 681. 1,872 : 36
- 682. 1,002 : 128
- 682. 1,248 : 104
- 683. 0,25 : 16
- 683. 0,8 : 64
- 684. 0,252 : 21
- 684. 0,288 : 16
- 685. 0,06 : 4
- 685. 0,05 : 125
- 686. 0,002 : 25
- 686. 0,018 : 45
- 687. 4,75 : 100
- 687. 0,059 : 1000
- 688. 0,027 : 30
- 688. 0,009 : 40
- 689. 3,01 : 500
- 689. 0,343 : 7000
- 690. 0,0051097 : 32
- 690. 0,000837 : 27

բ) Ամբողջ թիւը բաժանել կոտորակի վրայ:

- 691. 1 : 0,5
- 691. 7 : 0,1
- 692. 21 : 0,7
- 692. 16 : 0,8
- 693. 35 : 0,07
- 693. 28 : 0,004
- 694. 8 : 0,125
- 694. 64 : 0,0625
- 695. 126 : 0,35
- 695. 143 : 0,026
- 696. 574 : 1,4
- 696. 1172 : 0,05
- 697. 42 : 8,4
- 697. 144 : 1,2
- 698. 1 : 0,000001
- 698. 13 : 0,0002
- 699. 126 : 0,00504
- 699. 89 : 0,02848
- 700. 8778 : 4,389
- 700. 69 : 0,000003
- 701. 70 : 0,016
- 701. 111 : 69,375

գ) Կոտորակը բաժանել կոտորակի վրայ:

- 702. 3,6 : 0,4
- 702. 0,49 : 0,07
- 703. 9,09 : 0,18
- 703. 1,25 : 0,16
- 704. 7,2 : 0,36
- 704. 0,1 : 0,125
- 705. 4,27 : 0,0025
- 705. 0,06 : 0,0003
- 706. 0,3 : 0,0075
- 706. 16,8 : 0,007
- 707. 0,1 : 0,064
- 707. 2,5 : 0,0256

- 708. 0,014 : 0,00028
- 709. 3,022 : 0,02
- 710. 0,0064 : 12,5
- 711. 90,30602 : 3,01
- 712. 0,1715 : 3,43
- 713. 0,000637 : 1,3
- 708. 7,13 : 0,0000713
- 709. 0,492 : 0,4
- 710. 0,027 : 10,8
- 711. 131,2168 : 105,82
- 712. 1,0648 : 0,121
- 713. 0,000735 : 83,5

Որոշել հետևեալ թուերի քանորդները ճշտութեամբ 0,1 մասերի.

- 714. 4,7 : 9
- 715. 5 : 0,03
- 716. 2,59 : 1,9
- 714. 5,03 : 37
- 715. 16 : 0,7
- 716. 0,07 : 0,009

Որոշել հետևեալ թուերի քանորդները ճշտութեամբ 0,01 մասերի.

- 717. 4,27 : 31
- 718. 57 : 1,3
- 719. 0,58 : 0,12
- 717. 0,97 : 29
- 718. 37 : 0,013
- 719. 0,071 : 1,5

Որոշել հետևեալ թուերի քանորդները ճշտութեամբ 0,001 մասերի.

- 720. 5,82 : 7
- 721. 1 : 0,00573
- 722. 0,0185 : 1,0003
- 720. 0,025 : 21
- 721. 2 : 1,0604
- 722. 1,065 : 0,02145

Որոշել հետևեալ թուերի քանորդները ճշտութեամբ 0,000001 մասերի.

- 723. 0,08934 : 31
- 724. 57 : 0,011
- 725. 1,7 : 0,19
- 723. 2,9 : 2300.
- 724. 9 : 0,305
- 725. 0,0079 : 3,1
- 726. 5875,2 մսխալը *նրքան* փութ է կազմում:
- 726. 1622,25 արշինը *նրքան* վերստ է կազմում:
- 727. 280,56 մատնաչափը *նրքան* արշին է կազմում:
- 727. 265,86 մսխալը *նրքան* գեղատան զրվանքայ է կազմում:
- 728. 201,6 ըոպէն օրուայ *նր* մասն է կազմում:
- 728. 34,56 թերթը օգմալի *նր* մասն է կազմում:

- 729. 33 զրվ. 19 լ. 0,6 մսխալը փթի *նր* մասն է կազմում:
- 729. 5 օր 7 ժամ 40,8 ըոպէն շաբաթուայ *նր* մասն է կազմում:
- 730. 1 փ. 10 զրվ. 2 լ. 1,6 մսխ. : 1,25
- 730. 10 օդ. 9 դաստ. 11,7 թ. : 0,8
- 731. 2 սաժ. 6 ոտն. 6,5 մատ. : 5 ոտն. 2,5 մատ.
- 731. 5 օր 11 ժամ 52,32 ըոպէն : 10 ժամ 8,64 ըոպէ.
- 732. Մետրը=1,4 արշինի: Ո՞րքան մետր է պարունակում 158 սաժէն 2 արշինի մէջ:

732. Կիւօզրամմը=2,4 զրվ.: Ո՞րքան կիւօզրամմ է պարունակում 10,584 փթի մէջ:

733. 6 միատեսակ մոմակալներ շինելու համար գործ գրին 9,75 զրվ. պղինձ: Ո՞րքան է կշռում ամեն մէկ մոմակալը:

733. 342,5 սաժ. տարածութեան վրայ անիւր պտտում է 274 անգամ: Ո՞րքան է անիւի շրջապատը:

734. 7,06-ը ինչ թուի վրայ պէտք է բազմապատկենք, որ ստացուի 49,8436:

734. 3,0087-ը ինչ թուի վրայ պէտք է բաժանենք, որ ստացուի 0,9:

735. 1,25 զրվ. ինչ թուի վրայ պէտք է բազմապատկենք, որ ստացուի 18 փ. 14,85 զրվ.:

735. 4 սաժ. 4 ոտ. 4,5 մատ. ինչ թուի վրայ պէտք է բաժանենք, որ ստացուի 259:

736. Ինչքն է հաւասար x -ը, եթէ $0,37x=0,0777$:

736. Գտնել այն թիւը, որի 0,00128 մասը հաւասար է 1-ին:

737. Ես առաջ կարգացի զրքի 0,15 մասը, յետոյ մնացորդի 0,2 մասը, ապա նոր մնացորդի 0,5 մասը, որից յետոյ մնաց 102 երես: Քանի երես է զիրքը:

737. Մէկը առաջին օրը ծախսեց իւր փողի 0,18 մասը, երկրորդ օրը մնացորդի 0,4 մասը, իսկ երրորդ օրը նոր մնացորդի 0,5 մասը: Նա *նրքան* փող ունէր, եթէ երկրորդ օրուայ ծախսածը երրորդ օրուայ ծախսածից 1,64 ը. աւելի էր:

738. Գինեվաճառը 250 շիշ գինու հետ, որի շիշն արժէր 0,375 ը., իստուեց 125 շիշ ջուր: Ո՞րքան կարժենար իստուելու շիշը:

738. Վաճառականը 4,125 փ. սուրճի հետ, որի փութն արժէր 11,2 ր., խառնեց 2,125 փ. սուրճ, որի փութն արժէր 14 ր.: Ո՞րքան կարժենար խառնուրդի փութը:

739. Մէկ խորանարդ մատնաչափ ջուրը կշռում 3,84 մրս-խալ: Ո՞րքան խորանարդ մատնաչափ է պարունակում մի վեղրո ջրի մէջ, որը կշռում է 30 գրվ.:

739. Օդը ջրից 768 անգամ թեթև է: Ո՞րքան կ'կշռի 1 խոր. սաժէն օդը, եթէ 1 խոր. տոնաչափ ջուրը կշռում է 69,12 գրվանքայ:

740. Վաճառականը իւր ունեցած թէյի 0,4 մասը ծախեց գրվանքան 2,25 բուբլիով և ստացաւ 32,4 բուբլի: Նա ո՞րքան թէյ ունէր:

740. Գերձակը արշինը 4,2 բուբլիով մի կտոր մահուդ գընեց և վճարեց 252 ր.: Այդ մահուդի 0,55 մասից մի քանի միատեսակ վերարկու կարեց և ամեն մէկ վերարկուի համար գործ գրեց 5,5 արշին մահուդ: Նա քանի վերարկու կարեց:

741. Անասպարհորդը 4,8 ժամում անցաւ երկու քաղաքների միջի տարածութեան 0,6 մասը: Ո՞րքան է այդ տարածութիւնը, եթէ իւրաքանչիւր ժամում նա անցնում էր 23,125 վերստ:

741. Մի մարդ իւր փողի 0,36 մասով գնեց 1,25 արշին շալ, իսկ մնացած փողով գնեց 2,5 արշին մահուդ, արշինը 4,8 ր.: Ո՞րքանով էր գնել շալի ամեն մէկ արշինը:

742. Վաճառականը գնեց 32,5 գրվ. թէյ, իւրաքանչիւր 2,375 գրվանքան 3,8 բուբլիով: Բոլոր թէյի 0,4 մասը ծախելով, 5,2 բուբլի օգուտ ստացաւ: Ո՞րքանով էր ծախել թէյի մէկ գրվանքան:

742. Գերձակը գնեց 25,5 արշին մահուդ, արշինը 3,4 բուբլիով. էլի գնեց 62,5 արշին մահուդի 0,8 մասը և բոլորին վճարեց 346,7 բուբլի: Ո՞րքան արժէր երկրորդ կտորի ամեն մէկ արշինը

743. Աւազանը, որը տանում է 409,79 տակառ ջուր, ունի երկու խողովակ: Առաջին խողովակով իւրաքանչիւր 11 ժամում աւազանի մէջ ներս է թափւում 663,63 տակառ ջուր, իսկ

երկրորդ խողովակով իւրաքանչիւր 15 ժամում դուրս է թափւում 619,05 տակառ ջուր: Ո՞րքան ժամանակում կըլցուի աւազանը, եթէ երկու խողովակներն էլ միաժամանակ բանանք:

743. Ջրամբարը, որի մէջ պարունակւում է 2125,5 վեղրո ջուր, դատարկում են երեք ջրհան մեքենաներով: Առաջին մեքենայով իւրաքանչիւր 0,7 ժամում դուրս է թափւում 84,28 վեղրո ջուր, երկրորդով՝ իւրաքանչիւր 4,5 ժամում 452,25 վ., իսկ երրորդ մեքենայով՝ ամբողջ ջրամբարը դատարկւում է 34,008 ժամում: Ո՞րքան ժամանակում կըգատարկուի ջրամբարը, եթէ երեք մեքենաներն էլ միաժամանակ գործեն:

744. Ա և Բ կայարաններից, որոնց միջի հեռաւորութիւնը 179,1 վերստ է, միաժամանակ դուրս եկան երկու դնացք և գնում են իրար հանդէպ: Առաջին դնացքը իւրաքանչիւր 1,5 ժամում անցնում է 43,875 վերստ ճանապարհ, իսկ երկրորդը իւրաքանչիւր 0,7 ժամում՝ 21,315 վ.: Ո՞րքան ժամանակից յետոյ դնացքները միմեանց կըհանդիպեն:

744. Մի քաղաքից դուրս եկաւ մի ճանապարհորդ և գընում էր մի այլ քաղաք. նա իւրաքանչիւր 0,3 ժամում անցնում էր 3,75 վերստ տարածութիւն: 3 ժամից յետոյ նոյն քաղաքից դուրս եկաւ մի ուրիշ ճանապարհորդ, որը պէտք է հասնէր առաջինին և իւրաքանչիւր 1,02 ժամում անցնում էր 15,3 վերստ: Երկրորդ ճանապարհորդը ո՞րքան ժամանակից յետոյ կըհասնի առաջինին:

745. Թիֆլիսի վաճառականը Փարիզից ստացաւ 150 մետր մահուդ, 2709 Ֆրանկ արժողութեամբ: Ո՞րքան արժէ ռուսաց փողով այդ մահուդի մէկ արշինը, եթէ մետրը հաւասար է 1,4 արշինին և մէկ բուբլին, կուրսի համեմատ, կազմում է 344 սանտիմ: (Սանտիմը=0,01 Ֆրանկին):

745. Ո՞րքան արժէ 12 կիլոգրամի թէյը, եթէ 1,171875 գրվանքան արժէ 3,375 ր. և 1 կիլոգրամը հաւասար է 2,4375 գրվ.:

746. Սենեակի լատակը տախտակամածելու համար, որի մակերևութը 12 քառ. սաժ. 4,8 քառ. արշին է, գործ դրին 20 տախտակ, իւրաքանչիւրը 7 արշ. 8,32 վերշ. երկարութեամբ: Ո՞րքան է տախտակի լայնութիւնը:

746. Սենեակի երկարութիւնն է 4 սաժ. 1,2 արշ., լայնութիւնը 2,8 սաժ., իսկ բովանդակութիւնը 30 խոր. սաժէն 21,6 խոր. արշ.: Ո՞րքան է սենեակի բարձրութիւնը:

Հետեւալ օրինակների մէջ ցոյց տուած զօրծողութիւնները կատարել՝

747. (5,735 + 2,265) : (1,11 - 0,485)

747. (25,7 - 3,725) : (0,01 + 0,005)

748. (2,7 : 4) + (5 : 0,08) + (0,0175 : 0,7)

748. (8,025 : 0,5) - (1 : 0,16) - (16,66 : 1,7)

749. (15 : 0,3) * (0,14 : 7) + (6,3 : 5,25) * (0,09 : 0,25)

749. (4,8 : 16) * (30 : 0,96) - (1 : 0,8) * (3,35 : 0,5)

750. {[(1,2 + 2,7) : (8,6 - 0,8)] : (3 - 2,8)} * 0,4

750. {(4 - 3,65) : [(0,03 - 0,002) : (0,75 + 0,05)]} * 0,7

751. {[(4,09 + 3,76) : 1,57 - (0,9 - 0,03) : 6,25] : (1 - 0,3924)} * (3,4 - 3,275)

751. (25,4 - 3,71) : {[(0,7 - 0,04) : 0,03 + (3,27 + 8,05) : 0,8] * (3 - 2,6)}

752. (0,27 + 3,72 - 0,6) : 0,2 / (1 - 0,4) * 2,5

752. (5,6 - 2,4 + 7,15) * 0,04 / (3 - 2,586) : 0,5

753. (3,2 - 0,554) : (0,4 * 0,35) - 1 : 0,16 / 0,0049 : 0,007 0,3125 * 0,8

753. (2,5 + 4,04) * (0,33 : 0,2) + 2,4 * 1,5 / 0,981 : 0,2 1,8 : 0,9

754. [(5 - 0,8) : 0,06 - (5,2 - 4,25) * 179,2] / [(2,7 - 0,2) * 0,2 (0,31 + 0,222) : 0,125] : 12,5

754. 4,83 : [(32,9 - 14,4) * 2,4 + (1,09 + 5,51) : 1,2] / [(0,35 + 0,05) : 0,5 (0,6 - 0,4) * 1,1]

755. {[(0,91 - 0,1) * (1 - 0,6) / (0,38 - 0,02) : 10 + 1 + 0,4 + 0,3 / 0,4 - 0,3] / [(10 - 3,33) / 0,37] * (0,45 + 0,05)] * 1,2} : 1,25

755. 2,1 : {0,6 * [4 - 1 + 0,5 / 1 - 0,5 - (4 - 7,5 / 2,5) * (0,8 - 0,3)] / [(0,8 + 0,08 + 0,008) : (3,29 - 2,18)]}

§ 20. Հասարակ կոտորակը դարձնել տասնորդական: Տասնորդական կոտորակը դարձնել հասարակ:

ա) Հասարակ կոտորակը դարձնել տասնորդական:

Հետեւալ Հասարակ կոտորակները դարձնել տասնորդական՝

- 756. 3/4, 5/8 756. 4/5, 7/20
757. 13/25, 17/40 757. 27/125, 29/625
758. 2^11/16, 5^3/64 758. 4^17/32, 11^1/1250
759. 1^3/12, 7^6/48 759. 8^3/375, 10^11/704

Հետեւալ Հասարակ կոտորակները դարձնել տասնորդական, նախապէս օրոշելով տասնորդական թուանշանների թիւը՝

- 760. 1/2, 1^2/5 760. 7/25, 2^3/4
761. 7^11/20, 10^13/80 761. 3^17/400, 46^3/6250
762. 5^3/75, 1^7/28 762. 6^11/176, 9^7/875

Հետեւալ Հասարակ կոտորակները դարձնել տասնորդական՝

- 763. 2/3, 5/9 763. 6/11, 7/33
764. 1/7, 5/13 764. 11/19, 1/23

765. $\frac{10}{21}, \frac{11}{37}$ 765. $\frac{16}{27}, \frac{6}{49}$
 766. $1\frac{7}{39}, 2\frac{8}{51}$ 766. $3\frac{1}{51}, 4\frac{10}{77}$
 767. $8\frac{1}{57}, 11\frac{11}{57}$ 767. $5\frac{100}{121}, 20\frac{15}{169}$

Հետևեալ Հասարակ կոտորակները դարձնել տասնորդական՝

768. $\frac{1}{6}, \frac{5}{12}$ 768. $\frac{7}{15}, \frac{11}{36}$
 769. $\frac{13}{38}, \frac{21}{44}$ 769. $\frac{5}{18}, \frac{25}{276}$
 770. $\frac{7}{88}, \frac{29}{72}$ 770. $\frac{9}{14}, \frac{7}{65}$
 771. $2\frac{11}{45}, 5\frac{15}{26}$ 771. $6\frac{22}{35}, 8\frac{5}{24}$

Հետևեալ Հասարակ կոտորակները դարձնել տասնորդական, նախապէս որոշելով ստորակէտի և պարբերութեան մէջ եղած թուանշանների թիւը՝

772. $\frac{5}{6}, \frac{1}{12}$ 772. $\frac{11}{24}, \frac{13}{45}$
 773. $\frac{35}{48}, \frac{17}{75}$ 773. $\frac{41}{150}, \frac{127}{300}$
 774. $3\frac{1}{18}, 7\frac{3}{14}$ 774. $1\frac{29}{74}, 9\frac{53}{888}$

բ) Տասնորդական կոտորակը դարձնել հասարակ:

Հետևեալ վերջաւորեալ տասնորդական կոտորակները դարձնել Հասարակ՝

775. 0,4; 0,25 775. 1,75; 2,625
 776. 0,008; 0,0012 776. 21,005; 0,1024
 777. 30,00625; 1,0048 777. 2,0032; 5,0000256

Հետևեալ ճիշտ պարբերական կոտորակները դարձնել Հասարակ՝

778. 0,(3); 0,(9) 778. 2,(6); 4,(9)
 779. 0,(12); 3,(21) 779. 4,(36); 0,(51)
 780. 1,(27); 0,(72) 780. 6,(54); 0,(63)
 781. 0,(03); 0,(90) 781. 0,(09); 0,(60)
 782. 0,(135); 0,(888) 782. 0,(108); 0,(117)
 783. 0,(063); 0,(720) 783. 0,(072); 0,(630)
 784. 1,(009); 4,(090) 784. 5,(006); 2,(900)
 785. 0,(1827); 0,(3501) 785. 0,(1206); 0,(1629)
 786. 1,(0027); 0,(0005) 786. 0,(0108); 3,(2025)

787. 0,(04878); 2,(39024)
 787. 0,(90243); 0,(05643)
 788. 0,(153846); 0,(454545)
 788. 0,(428571); 0,(923076)
 789. 3,(714285); 0,(538461)
 789. 1,(142857); 0,(108108)

Հետևեալ խառը պարբերական կոտորակները դարձնել Հասարակ՝

790. 0,1(6); 0,6(1) 790. 0,2(9); 0,8(3)
 791. 2,44(9); 0,31(6) 791. 3,58(3); 0,30(5)
 792. 0,3(45); 0,4(09) 792. 0,5(25); 0,0(99)
 793. 0,0(09); 1,00(9) 793. 5,0(36); 4,0(63)
 794. 0,06(36); 0,00(81) 794. 0,24(72); 7,25(75)
 795. 0,01(9); 0,01(3) 795. 6,09(09); 0,90(90)
 796. 2,1(322); 0,1(327) 796. 0,5(370); 0,6(918)
 797. 0,027(9); 8,459(8) 797. 0,005(9); 0,001(6)
 798. 0,9(814); 0,1(322) 798. 0,0005(9); 0,1000(10)
 799. 0,8541(6); 2,1736(1)
 799. 4,0317(89); 0,89(0317)
 800. 0,2(730158); 3,8(809523)
 800. 0,0(714285); 0,0(384615)
 801. 1,578(703); 0,026041(6)
 801. 0,96(428571); 5,28(846153)

§ 21. Խառը խնդիրներ հատարակ եւ տասնորդական կոտորակներով:

802. $[2\frac{1}{6} + 0,(5)] \cdot 4,5$
